



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԻ ԵՐԵՒ

# ՄԻՋԱՎԱԿԻՔ


ՀԵՅՈՅ Ա. Օ. Գ. ՊԵՏՐՈՎ-ՌԵՆԻՑ

Աշխատավոր թիւն Վիլջը-Կիմանար

1) Հայերի Երասիս պատճեն անցնելը.

2) Տառիկեան Հայերը և Առ-Ասիսիչն անայ հիմնարկութեանը.

Ա. ՊԵՏՐՈՎ-ՌԵՆԻՑ



1863



1999


322/

ՄԻԶՆԱՎԱԿԵՊՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԵՏԱԿԱՆԻՑ

Ը

881



PP-PP-PP-PP-PP

PP-PP-PP-PP-PP



PP-PP-PP-PP-PP

Կոմիտասի գործեալ թիւն

# ՄԻՋԱՎԱՐԴԻԳԲ

ՀԵՅՈՑ Ե.Օ.ԳԻ ՊԵՏԱԿԱՆ-ԹԵՐԵՒՅՑ

Աշխատասիրութիւն Վերջը-Կիմանաք

1092

- 
- 1) Հայերի Երասխ գետէն անցնելը.
  - 2) Տաւրիկեան Հայերը և "Սոր-Նախիջևանայ հիմնարկութիւնը.
- 



1863

260

Дозволено Цензурою. С. Петербургъ, 15 Мая 1863 года.

41680.60

28. 1885

Санкт-Петербургъ

• Տարբանի Առաջելի Վատկանեմ.

**ՀԵՅԵՐԻ ԵՐՍՍԻ ԴԵՑԷՆ ԾՆՑՆԵԼԸ**

1

Սփոռա քեզ, Հայոց ԽԵՂՃԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ,  
Ցիր ու ցան եղար անմնղ, անխարհօւրդ.....



առաբաղդ Հայաստանի գլխուն շատ  
դառնաղէտ և կսկծալի բաներ են եկել,  
մինչև որ հասել է մեր օրերը, երբ որ  
սկսում ենք նորա մեջ տեղ դիտելու, եթէ ոչ  
բոլորովին խաղաղութիւն և անզորրութիւն, գոնէ  
նոցա նշոյլը Ռուսաց Հովանաւորութիւնը, որ տա-  
րուծվում է մինչև Երասխ գետի հիւսիսային ա-  
փանքը՝ Փրկառէտ ազգեցութիւն ունեցաւ Հայա-  
տանի մի մասին վրայ, ուր ոչ բարբարոս Պարսիկը,  
ոչ անզորմ Տաճիկը, ոչ անսանձ Քիւրղը և ոչ նոցա  
շրջապատող խառնիճաղանձաղերը կարող են խլատել

Այս նեղութիւնը, ինչ որ ոնին այժմ Հայերը  
իրանց բնիկ հայրենիքի մեջ, նոցա Համար մեկ այն-  
պէս սովորական բան է դարձել, որ եթէ մեկ մարդ  
Երասխի այս երեսէն անցնի միւս երեսը, չէ կարող  
հաւատացնել այն կողմի Հայերին, թէ այս կողմի  
Հայերը այսքան անզորը և անվիշտ կեանք են անցու-  
ցանում, և իրանք-էլ չեն հաւատալ, թէ այն երեսի  
Հայերը խոկասէն Հայեր են՝ իրանց աղքակից, որ  
բարբարոսաց բռնութեան տակ այնսկէս ողորմելի

1

կեանք անցուցանելով, Տաճկաց հպատակ Հայր՝ Տաճկի  
բարք ու բնաւորութիւն է ստացել, Պարսկաստանի  
Հայր՝ Պարսից, Փիւրդիստանի բնակիչն Հայր՝ Փիւրդի,  
այնքան որ՝ միտքերէն-էլ չեն անց կացնում իրանց  
դրութիւնը սակաւ ինչ բարւոքելու հնարք միտք ա-  
նելու, և 'ի գործ դնելու այն:

Արածանի գետը (Արփաչայ), որ Կարսայ վե-  
տակը և այլ մանր առուակներ հետը առաջ՝ մտնում  
է Եփրատ, Տաճկաց սահմանն է. իսկ Եղասխը՝ Մեծ  
Վասիաէն սկսած մինչև Ամարաս կամ Պայրամլու-  
դիւղը՝ Պարսից սահմանագլուխն է: Այս երկու  
գետը, որ տեղ տեղ՝ մեկ երեսէն ոչ թէ միայն ձայն,  
այլև ձեռք կըհասնի միւս երեսի կանգնողին, Հայերի  
դրութեան մեջ մեկ զարմանալի զանազանութիւն են  
ձգում: Հայր գետի այս կողմին աղատ, ուրախ, ճոխ  
և երջանիկ է. իսկ գետի միւս երեսին՝ դերիի նը-  
ման՝ տրտում, աղքատ, ներդաշած և թշուառ:  
Այս կողմի Հայր առըստի համար բնաւ չէ հոգս  
քաշում, իւր կենցաղավարութեան ճանապարհը հա-  
մարեալ թէ ապահովել է. այժմ նորա ջանքը այն է,  
որ իւր ուտելը, խմելը, նստելը, վեր կենալը, տունը՝  
կենցաղակրթութեան ճանապարհներով Եւրոպացոց  
նմանեցնէ, պատուաւոր պաշտօններու մեջ գտնուի,  
տէրութեան կամ հասարակութեան ծառայելով՝  
իւր աղգակից Հայերի վրայ բարի աղղեցութիւն ունե-  
նայ, քաղաքակիցներու մեջ յարդ ու պատիւ ստանայ,  
վաճառականութեամբ և աղգասիրական հանդէս-  
ներով համբաւ ունենայ, և իւր Հայ անունը պայծա-  
ռացնէ: Իսկ միւս երեսի Հայր՝ առըստի հոգսէն  
աչք չէ բաց անում, հողագործ, մշտի, բեռնակիր,  
հովիւ, արհեստաւոր՝ գետնափոր տներումը, որպէս  
թէ արեգակէն է փախչում, նորա տռտուրը նեղ

և անձուկ ոլորտի մէջ է սեղմած, նորա կենցաղավարութիւնը վշտերու և դառնութեան շաղկապ, և բնաւ մտքէն չէ անց կայնում, թէ կայ մի այլ կեանք, որ վայելում են նորա համազգիքն-էլ, որ քան զայն իւր անցուցած կեանքը քաղցր է, և երանաւէտ:

Դեռ ևս շատ ժամանակ չէ, որ այս երկու գետի աջ ու աչեակ ափերի մէջ ընկաւ այդ մեծ զանազանութիւնը. Մինչև տասնեւններորդ դարու սկիզբը՝ Արդաստանի թագաւորներն-էլ մէկ մէկ բռնաւորներ լինելով՝ Պարսից խաներու և բէզերու և Տաճկաց փաշաներու, վէլիներու և դէրէրէյիներու նման, անդըլուխ և տնօլոչ կառավարութեան մէջ պարսնոցաթաղ եղած՝ իրանց հպատակներուն ծանրութիւն և բեռն էին. Ի՞նչ ասել սէտք է Գանձակի, Գարբանդի, Շորու, Շիրուանի, Շամախու, Երևանայ, Ղարաբաղի, Նախիջևանոյ խաներու և Ախալցխայի փաշայութեան համար, որ 1825 և 1827 թուին Ռուսաց զէնքի զօրութենով աղատուեցան Պարսից և Տաճկաց ձանկերէն և բազմամարդացան Օսմանցոց և Պարսից տէրութիւններէն դուրս եկած հայազդի դաղթականներով, որոնց շատը անցան Երասխ և Արածանի գետերէն այս երես Բայց այս անցնելը ո՞րքան աննման էր այն անցնելուն, երբ որ Հայերը տասնեւթը դարու սկիզբը բռնադատուեցան Շահ-Աբրասի հրամանով՝ Երասխի այս երեսէն միւս երես անց կենալ Այս անցքը՝ Հայաստանի և Հայոց ազդի քաշած բազմադիմի նեղութիւններու մէկը գոլով՝ հարկադրում է պատմաբանին՝ ընթերցասիրաց մտադրութիւնը դարձուցանել նորա վրայ, որ իւր մէջը շատ արտասուաց արժանի անցքեր է պարունակում:

Աւէքսանդր Վակեդոնացիի օրէն սկսած՝ Հայատանը մէկ կռուտինձոր էր դարձել Եւրոպոյի և Ա-

սիոյի մ.ջ զօրացած թագաւորների համար, որ  
Երակացիք-էլ, Ասիացիք-էլ վրան ոչք ունեին, և  
նորան տիրապետելու համար՝ մեկ զմեկու հետ ան-  
դադար կավում էին և արիւն թափում, և երբ բո-  
լորովին ձեռքերը սկահել չեին կարողանում՝ կտոր  
կտոր բաժնում էին;

Հայոց վերջին հայկակն թագաւորը Վահէ՛ Վան  
թագաւորի որդին, Պարսից Գարեհ թագաւորի  
հետ դաշնակից էր, և այդ սկառչառաւ կանգնեցաւ  
Մեծին Ալեքսանդրի դեմ, սկառերազմի մ.ջ մեռաւ,  
և Փոխտումն 33. տարի առաջ՝ Հայաստանը ընկաւ  
Մակեդոնացոց ձեռքը: Ալեքսանդրի յաջորդ զօրա-  
վարները մեկմեկու ձեռքէն շատ անգամ խլեցին  
Հայաստանը, և այս անեց մինչև Արշակունեաց գալը,  
որոնք Փոխտուի 150 թուականին Հայաստանին տի-  
րասկետեցին: Արշակունեաց ձեռքէն առին 382 թուին  
Հռոմայեցիք: Հռոմայեցոց ձեռքէն մեկ մասը, 923  
թուին, մեաց Պարսից, խել միւս մասը առաւ Բիւ-  
զանտին կայսերութիւնը: Յունաց և Պարսից ձեռքէն,  
693 թուին, խլեցին Արարացիք: Սորա-էլ Հազար  
տարու մօտ տիրա ւետելէն յետ, վերջապէս թողին  
Օսմանցոց ժառանգութիւն, որ երբ Բիւզանտին  
Յունաց կայսերութիւնը նուաճեցին, ոկսան արշաւել  
Հայաստանը և աշխարհակալել: Հայաստանը սոցա  
ձեռքէն խլելու մոքով, նոցա ախոյան կանգնեցան  
Պարսիկը, և շատ անգամ սոցա սկառերազմներից և  
մեկմեկու ձեռքէն յափշտակելից՝ Հայաստանը ոտնա-  
կոխ եղաւ, և դատարկուեցաւ խը ընակիչներէն:  
Քանի անգամ սարսափնելի սով եկաւ այս աշխարքի  
վրայ, և մեծ ամոյութիւն ձգեց այս բարգաւաճ և  
ծաղկեալ երկրի մ.ջ:

**Չահ-Արքան՝ Պարսից կոռուստէր, արծաթասէր,**  
 բոնաւոր և անողորմ թագաւորը եկաւ, 1603 թուին,  
 և վերջապէս Օսմանցոց ձեռքէն առաւ Ատրպատա-  
 կան աշխարքը, տիրասպետոց Սալբաստի, խոյայ և  
 Մարանդայ պարսկահայք և Վասպուրական ասած  
 երկիրներուն, անցաւ Երասխ գետը, առաւ Նախիջե-  
 ւան քաղաքը, գնաց պաշարեց Երևանը և մեծ պատե-  
 րազմով խեց, տիրեց բոլոր Արքատ աշխարքին, և  
 Ամերիկունայ նախարարին, որ իւր թագաւորի նման  
 մեկ բոնաւոր և անզութ մարդ էր՝ այնաեղ կուսա-  
 կալ զրեց: Այս յաջողութիւններէն յետ՝ Շահ-Արքան  
 իւր զօրքը ցրուեց բոլոր Հայաստանի մէջ, որ ամեն  
 կողմ տարածուելով և ասպատակելով՝ բիւրաւոր  
 Հայազդի և օտարազդի գերիներ բերին: Շահ-Արքասը  
 այն գերիներն ուղարկեց Պարսից երկիր և ինքը  
 մնաց Հայաստան: Այս ամեն հանդամանքը նորա  
 սրտի մէջ յղացուցին Հայոց ազդի դէմ մէկ անասելի  
 և անլսելի նենդութիւն: Թէսէտ Հայերը շատ պա-  
 տիւ տուին: Շահ-Արքասին և շատ մեծամեծ ըն-  
 ծաներ նուիրեցին նորան և նորա իշխաններուն, բայց  
 չկարողացան նորա անյափ ցանկութիւնը կշտայնել.  
 Նորա ագահութիւնը, անզ թութիւնը և խորաման-  
 կութիւնը պարապ հանեց Հայերի ամեն ջանքն ու ա-  
 մեն յոյնը, և Հայերը չիպտան մէկ հանգիստ և ան-

դորք կեանք, այլ կարելի է ասել թէ՝ այն շատ  
սլարգեներ տալովը՝ նորա ծակ աչքը բացին և իրանց  
համար դժբաղդութիւն պատրաստեցին։ Եահ-Ար-  
բասի Հայաստանի վրայ յարձակելու, այնքան տեղեր  
տիրապետելու և այնքան անհամար գերիներ Հայա-  
տան քշելու համբաւը հասաւ կոստանտնուպոլիս, և  
Սուլթան-Ահմէտ, Տաճկայ թագաւորը, խկոյն շար-  
ժեց բոլոր օսմանեան անպարտելի տէրութեան զօ-  
րութիւնը, և սպարապետ դնելով Ճղալիզանէ Սինան  
փաշախին, ուղարկեց Պարսից դէմ, որ Եահ-Արբասին  
Հայաստանէն դուրս հանէ ու Հայաստանը վերստին  
Տաճկայ ձեռքի տակ նուածէ։ Սինան փաշան սկսաւ  
իւր արշաւանքը Երբ լաւ Եահ-Արբասը՝ թէ Սի-  
նան փաշայի բխրաւոր բանակը մօտ է հասել Պարս-  
քաղաքին։ Հրամայեց որ իւր զօրքն-էլ կենտրոնանայ  
Աղջա-Ղալէ քաղաքումը. և ինչ ժամանակ որ ամեն  
պարսից զօրապետները, խաները, բէզերը և իշխան-  
ները հաւաքուեցան։ Եահ Արբաս յայտնեց նրանց իւր  
մոքի մէջ Հաստատած դժոխային խորհուրդը։ Այս  
անօրէն և անգութ բռնա որը տեսնելով թէ առա-  
ջին անգամը Պարսից երկիր գերիներ ուղարկելու  
գործը յաջողութիւնով վերջացաւ և Հայերու մէջ  
կենալով և Հայերիցը սէր, մեծարտնք, ոլտիւ ու  
անսպատմելի ընդունելութիւն գտնելով, Համան-  
դամայն նոյն Հարստութեան և Ճոխութեան տեղե-  
կանալով՝ ճանաչել էր նոյն պիտանացու և աշխար-  
հաշէն ազգ լինելը, և վաճառականութեան մէջ յա-  
ռաջադիմութիւն և մեծ յարմարութիւն ունենալը՝  
կոմեցել է նոցանով Պարսկաստանի մեռած վաճա-  
ռաշահութիւնը կենդանացնել և ոտքի կանգնեցնել,  
և իւր տէրութիւնը ճոխացնել, փոխանակ նորանց  
Պարսկաստան Հրաւիրելու և արտօնութիւններ շնոր-

Հելու, մտքումը դրել է խղճալի Հայերուն, որ սկա-  
տերազմի կոտորուածքներէ, սուրէ, սովէ, մահտարա-  
ժամէ, գերութիւնէ՝ հաղիւ թէ աչք էին բաց արել  
իրանց Հայրենիքն հանել և քշել խորին Պարս-  
կաստան, որ այն տեղ բնակուին և այն կողմի սոռո-  
տուրը ծաղկեցնեն և երկիրը բաղմամարդացնեն։ Մա-  
նաւանդ որ՝ աւելի վստահ չեր իւր զօքքին, թէ կա-  
րող են Օսմանցոց դէմ կանգնիլ և պատերազմով  
յաղ թել նրանց ու Հայաստանը նորա ձեռքումը պա-  
հել, վախենում էր թէ՝ Օսմանցիք որ գան՝ կրգանեն  
այն Հարուստ երկրի մէջ իրանց զօքքի և ձիերու  
Հարկաւոր պաշտրները և բնակուելու տեղ, և առ-  
աւել կրզօրանան Պարտից վրայ. մտքումը Հաստատեց,  
որ Հայաստանը իւր բնակիչներէն դատարկացնէ,  
գեղերը, բաղաքները աւերէ, քանդէ և անապատ շինէ,  
որ երբ Օսմանցիք համնին՝ չըգտնեն մէկ ոտք ամ-  
րացնելու տեղ։

Եշխանները այս որ լսեցին, նոյս սրտերու մէջ մէկ  
անօրէն և անզգամ յոյս վայլատակեց, որ եթէ այն  
անողորմ թագաւորը այս բարբարոսական բանը գը-  
լուխ հանէ, իրանքէլ շատ աւարներով կը ծոխանան,  
շատ գերիներու, ծառաներու և աղախիններու տէր  
կրղառնան և իրանց կանանոյ յարկերը՝ Հայազգի  
չքնաղ օրիորդներով և շքեղաշոք Հարսներով կը-  
լինեն։ Այս պատճառաւ սկսան թագաւորի մտքի մէջ  
զրած խորհուրդը գովել ու բարձրացնել և աւելի  
յորդորել, որ այս մեծ ու խոչեմ զործը ամեննեին  
յետ չըթողցնէ։ Շահ-Արքասը՝ այս մեծամեծաց յոր-  
դորանքն աւելի բորբոքուելով՝ կանչեց իւր մօտ  
Հայոց երեելիներուն և առաց կեղծաւոր քաղցրա-  
բանութենով. . , Տեսնում էք, որ ձեր երկրի մէջ մենք  
պիտի Օսմանցոց դէմ կոխներ ունենանք և պատե-

բազմներ անենք, և երկու բանակի մ.ջ-էլ կան այնպիսի գաղանամիտ և աւազակ մարդիկ, որ ձեր ստացուածքին, ձեր ընտանեաց և ձեր զաւակներուն ու կեանքին ևս կարող են մեծ մեծ վնասներ հասցնել: այս պատճառաւ ես լաւ եմ համարում և խորհուրդ եմ տալիս, որ դուք սցմին իսկ, քանի որ թշնամին հեռու է և կոխները սկսած չեն՝ ձեր ընտանիքը և ձեր ունեցած չունեցածը հաւաքէք ու մէկ քանի օրուան ճանապարհ՝ այս տեղերէն մէկ ասլահով տեղ հեռանաք, որ պատերազմների վտանգէն ազատ մնաք, և երբ պատերազմը վերջանայ՝ կարողանաք միւսանգամ խաղաղութեամբ ձեր տեղերը դառնալ և ձեր իրկրի մ.ջ հանդիսաւ և անվտանգ բնակուիլ:

Հասկացան հայազգի իշխանները անհաւատ թաղաւորի միտքը, որ մէկ քանի օրուան ճանապարհ հեռացնելը չէր, այլ բոլորովին իրանց հայրենիքն զլրկելն էր, և յոյտնի տեսան որ նա ողում է նրանց զլիսի տակ փափուկ բարձ զնել և տակերու ոփոռը հնարքով քաշել հանել, որովհետեւ պատերազմ տեսնելը՝ Հայերու համար մէկ նոր բան չէր, և գաղանամիտ ու աւազակ մարդիկ իրանիք-էլ շատ ոնէին, և կոխներու վնասը այնքան չէր լինիլ, որքան որ իրանց տնին տեղէն փախչելու վնասը. ուստի ընկաննորս ոռքերը և սկսան աղտչել, և շատ ընծաներ տալ նորան-էլ, նորա մեծամեծներուն-էլ, որ իրանց այն անգիտութիւնը չանեն, և շատ պատճառներով յոյտնի ցոյց տալ, որ այն բանը անելը՝ իրանց համար անհարին է և մեծ վնասներու պատճառ: Բայց սնիրաւ բոնակալը և նորա անօրէն ծառաները նորանց աղաչանիքին և պաղատանքին ամենենին ականջ չըդրին և ինչպէս նոցա բերած փաստերէն չըհամոզուեցան, նոյնպէս և նուիրած ընծաներին ե-

թես չըսկահեցին, և անողորմ Շահ-Արքասը յայտնա-  
ուէս հրամայեց, որ իւր խօսքն ու խորհուրդը ան-  
յապաղ և անշուշտ կատարեն, և կամենալով որ սյս  
աշխարհական հրամանը ձիշդ գլուխ դայ և հա-  
մայնածինց աւերածը տռանց շեղելու և տռանց դան-  
դաղանաց համեր Հայտստանի գլխին՝ Ամիրդունայ  
անխողձմանը նախարարին այդ բանին ոստիկանա-  
պետ և վերակացու դրեց, և ամեն մի քաղաք ու ա-  
մեն մի գիւղ տռանձին առանձին լիուկատար և բուռն  
իշխանութեամբ զօրացուցած մարդիկ՝ խաներէն, բէ-  
գերէն և ոստիկաններ նշանակեց, որ բնակիչներին  
բռնութեամբ հանեն և մէկ տեղ ժողովին, իսկ չը-  
հնաղանդւողներին անողորմաբար կոտորեն:

Պարսից իշխանները առին իրանց զօրքը և ցրի-  
լիկան Հայտստանի քաղաքներու և գեղերու մէջ և ա-  
մեն մէկ տեղի բնակիչներին ոկան իրանց բնակա-  
րաններէն ծեծելով, չարշարելով և բռնութիւններ  
անելով՝ հանել և դունդաղունդ ու երամ երամ Ա-  
րարատեան դաշտը քշել: Իսկ դաստիկուած քաղաք-  
ները և սպարտուած դիողերը, վանքերը, եկեղեցիները,  
հիւրանոյները, տաճարները, մասուռները, յիշատա-  
կարանները, ճանապարհի վրայի կշանանները, ոլան-  
դուկները, այդ իները, հնձանները, պարտէղները, հո-  
վանոցները, աշտարակները, բերդերը, ամրոցները,  
ջրաղացները, հողմաղայնները, կամորչները, ամա-  
րանոցները, բերդաղարակները և ամեն տեսակ կա-  
լուածները՝ կրակ տալ և այրել. իսկ կրակի դիմացող  
շինուածները քանդել, եղծանել, աւերել և հիմ-  
նույառակ սնել, ոյնուն որ՝ բիչ ժամանակի մէջ այն  
բազմամարդութեամբ և հոյակաս կերտուածներով  
ծովացոծ վայելչաղարդ երկիրը՝ մէկ առայի, անմար-  
դարնակ, անշին անապատի նմանեցաւ և Արարատեան

ընդարձակատարած, լայնածաւալ դաշտերը ծայրէ 'ի ծայր լցուեցան Հայերի արանց և կանանց, ծերոց և մանկանց անթիւ բազմութեամբը:

Ո՞րքան փոխել էին Հայերը իրանց բնութիւնը, որ այնքան տանջանք յանձն էին առնում, և չէին ուղում իրանց աղատութեան և իրանց զաւակներու փրկութեան համար ոտքի կանգնել: Ի հարկէ, Պարսիկք առաջ նոցա ձեռքերէն զէնքն էին խլել. բայց այնքան բազմութիւնը, որ մէկ աեղ հաւաքուել էր՝ կարող էր մեծ բան անել և Շահ-Արքասին ու բոլոր Պարսից զօրքը միայն բրերով ու քարերով ջարդել և փախցնել. բայց Հայերը թոյլ տուին, որ իրանց ոչխարի նման առջևները ձգեն ու քշեն, չըմտածելով այն նեղութիւնները, ինչ որ պիտի քաշէին ապագային: Եթէ ասենք թէ՝ վախեցան, որ ստացուածներէն և ինչքէն կրղրկուին՝ էլի զրկուեցան, եթէ մահէն վախեցան՝ մահը նորանց այնտեղ-էլ հասաւ, ուր որ բնաւ կասկած չունեին, եթէ ասենք թէ՝ զաւակների և ընտանեաց դերութենին վախեցան՝ չի մնաց այնպիսի գերդաստան, որ մէջէն չըզոհէր մէկ, երկու, հինգ և եռթը մարդ: Հայերի լութիւնը միայն աւելացուց Պարսից լըբութիւնը, ինչպէս և սլարգենները աւելացրել էին նոցա աղահութիւնը. հնազանդութիւն ցոյց տուին անողորմ թշնամուն, որին որ սլէոք էր ամենայն զօրութեամբ ընդդէմ կենաւ, մանաւանդ՝ երբ Օսմանցիք մօտիկ էին և Հայերը կարող էին դէմ կենաւ, մինչև որ նոքա հասնէին. բայց բանը տիյն էր, որ Օսմանցիք-էլ քան զՊարսիկները աւելի գթուտ չէին, նոքա-էլ չէին ուղիւ Հայերու զօրանալը. եթէ Հայերը իրաւ Պարսից նշահէին՝ կասկածոտ Օսմանցիք Հայերու մէջի լաւերին իրանք կըկոտորէին, ինչ-

պէս որ Խրիմու առման ժամանակն արին, Հայերը  
Խրիմը Վեհնետկեցոց ձեռքէն առին ու տուին Տաճկաց,  
Տաճիկները մէկ գիշեր քանի երևելի Հայերի ու լուխը  
առին, որ այն իրանց վարձ համարեն: Վայ այն մար-  
դուն, որոյ փրկութիւնը թշնամու ողորմութնեն  
լինի կախուած: Խմացան Պարսիկք, որ շատ Հայեր  
իրանց ընտանիքն առած՝ փախել են լեռներու վրայ  
և անմատոյց սյրերի մէջ թաք են կացել բռնակալի  
Հրամանով նորէն սկսան նոյտ պտրտելու երթալ,  
անհամար մարդիկ գտան և անպատմելի անողորմու-  
թիւնով ցած բերին այն տեղերէն և հասցրին բռն  
բանակը: Տասնապատիկ աւելի բազմութիւն տեղնի-  
տեղը զանազան պատրուակներով կոտորեցին, որ նո-  
րանց կանայքը և զաւակունքը իրանց ստացուածքնե-  
րով նոցա ստրուկ մնան:

3

Արդէն Վրաստան, Արցախ, Աղուանք, Տայք և  
Գուգարք գատարկուել էին, և նոցա մէջ բնակուած  
Հայերը համախմբուել էին Այրարատոյ գաւառի լայ-  
նածաւալ դաշտերու մէջ. Երբ որ Շահ-Արքաս լսեց  
թէ իւր սնօրէն Հրամանը կատարուել է և օսմանեան  
բանակը հասել է մօտիկ՝ իսկոյն երեսը դարձուց  
Աղչա-Ղալաէն դէպի Արարատ, և երբ հասաւ զօր-  
քով այն տեղերը, ուր որ Հայերը հաղարաւոր և բիւ-  
րաւոր բազմութեամբ մեծ ու պստիկ հաւաքուել  
էին (1654 թուին), Հրամայեց որ՝ ոշխարներու նման  
նախ Հայերու բազմութիւնը քշեն իւր սովորէն, և  
ապա Հայերի ետևէն զօրքը գնան ու նորանց չորս

կողմը պատաճ պահեն, որ Հայերը ըստախչին և ցրին ընկնին, վերջապէս ամենի եռեներին ինքն-էլ սկսաւ երթալ հովուի պէս իւր թիկնապահ մեծամեծներով:

Արարատայ աշխարհը՝ Ախենեաց և Վասպուրականի այն մասը, որ Եղասխի այս կողմն է, Աւտէացոց աշխարհը և նոցա շրջակայքը, ինչ որ դանրվամէ Կասսլից և Սև ծովերու միջոցումը, աւերուեցան, քանդուեցան, բրեչի և կրակի կերակուր դառան, և նոցա մեջի բնակիչքը որսէս թէ լզուելով խօսակիվեցան և հաւաքուեցան ճուրազի նման ու հասան Երասխի գետափունքը: Թահմաղ-Շուլի-Խանը հարուսա Զուղայ աւանի բնակիչներին հանեց իրանց բնակութիւններին և բերեց հասցրեց քանակին, որ իւր ճանասլարհը աւերակներով նշանաւորելէր Արարատէն մինչև Երասխի գետեղերը: Ցերեկը ծոխն էր բարձրանում մինչև երկինք, գիշերը բոցը երեսում շատ հեռաւոր տեղեր. փայտակերտ պահանգակապ շինուածները այրվում էին, և այրվում էին քարերը, որ մի քանի շաբաթ ծխելով՝ վերջապէս դառնում էր կրի շեղջակոյտ, որ իւր տակը ծածկում էր Հայաստանի հաղարամեայ հնութիւնները և արհեստապէտ ճարտար մարդոց հրաշակերտ ձեռագործները: Այսքան հարուած կրելէն յետ՝ էլի անխոնջ խողարկուն գտնում է Հայաստանումը շատ հնաւթեան հետք, որ եթէ այսպէս բարբարոսական վանդալականութեան հանդիպած չըլինէին՝ ո՞վ գիտէ թէ որդքան պիտի ճոխացնէին համաշխարհական թանգարանը...

Հահ-Արքասի հրամանով ուժան նաև էր, նաև ակներ և լաստեր կային Եղասխի վրայ կամ Կասսլից ծովումը՝ ժողովիւ էին այն տեղ, որ ջուրը աւելի խոր էր և նաև երաւ համար գիւրագնալիւ Այստեղ Պարսից զօրքը և Հայոց գաղթականութիւնը սկսան խառն

՚ի խուռն մտնել նաւերը կամ լաստերը և այս երեսէն  
միւս երեսը անցնել: Բայց որովհետեւ այնքան անհստ-  
մոր բաղման թեանը բաւական չէին այն տեղերը գլո-  
նուած նպաւկները և լաստափացտերը և դետի վրաց  
այն մօտ աւեղերաւմը կամուրջ չքկար, Շահ-Արքասը  
տեսնելով, որ ժողովրդեան անց կենալը ուշանում ե-  
երկարանումէ, և Օսմանցիք ալիտի հասնեն՝ վախեցաւ  
թէ այնքան բիւրաւոր գերիները ձեռքէն կ'առնուին՝  
շուարեցաւ: Կարող էր առաջ միայն Հայերուն ճամ-  
փել միւս երես. բայց վախեցաւ, որ Հայերը միւս ե-  
րես որ հասնեն՝ մեզրաճանձերու նման կրցրուին ու-  
կրփախիչն, որովհետեւ այն երեսն-էլ Հայաստանի կեսն  
էր. եթէ զօրաց կեսը միւս երես ուղարկէր Հայերին  
սպահանութիւն անելու՝ կեսով Օսմանցոց առջե-  
կանգնել չէր կարող. ուստի հրամայեց որ՝ նաւերով  
և լաստերով միայն զօրքի ծանր բեռները և Հայաս-  
տանէն հաւաքած աւարները տանեն և միւս երես ան-  
ցանցանեն. իսկ Հայերը թող նպաւկներու և լաստե-  
րու էլ յոյս չունենան, այլ անցապավակ ջուրը մանեն և  
լեզ տալով անց կենան այն սրահն պետէն, ուր որ  
նաւերու համար ման գալու խօր տեղն էր ընտրած:  
Խեղչ Հայերը տեսնելով, որ անհնարին է ե-  
րեխաներով ջուրը մտնելը, սկսան աղացել, որ  
թոյլ տան ջրի ճանփաները զննել և հուներէն անց  
կենալ, կամ մեկ այլ հնար գտնել և վահանգներէն ա-  
զատ մնալ. Շահ-Արքասը հրամայեց Պարսից զօրքին,  
որ էլ ամեննեխն թոյլ ըրտան Հայերին այս կազմը կամ  
այն կողմը մտիկ անել, այլ անդադար ետևներէն  
ստիպեն. որ՝ ջուրը մտնեն և չկախողներուն սրով ու-  
րբով քշին և ջուրն ընկնելու հարկադրեն ։ Պարսիկը  
էլ մի այդպիսի հրամանի էին սպասում, որ իրանց  
ցանկութիւնը կատարէին, սկսան ցոյց տալ իրանց

բնիկ անդմութիւնն ու անողորմութիւնը, որոյ տես  
նողներու մազերը քստմնափուշ էին դիզանում:

Այստեղ բացուեցաւ մեկ աղէտալի տեսարան. մայրը  
դստերէն էր բաժանվում. հայրը որդումէն, այրը կը-  
նոջէն և եղբայրը քրոջէն. Թէսկէտ առաջ ընկան  
ճօնփայ խմացող Հայերը, որոնք վերահաս փորձանք-  
ներու մէջ-էլ գիտէին իրանց հոգու հաստատու-  
թիւնը անվրդով սկահել, և ուզումէին և կարող էին  
Երասխայ հունէն անվտանգ Ճանապարհներով անց  
կացնել ժողովրդեան բազմութիւնը. բայց անողորմ  
Պարսից բռնադատութիւնը, (որ անդադար ետևնե-  
րէն հարկադրում էին մեծին ու փոքրին անխտիր  
ջուրը մանել և խորամանկութեամբ աւելացնում  
էին շփոթը, որ սղտոր ջրի մէջ ձուկ որսան) վեր ու  
վայր արաւ. գիտցողներու խմացածն-էլ և շուարե-  
ցուց ամենուն. արք և կանայք, երիտասարդք և կու-  
սանք, ծերք և տղայք, հարսունք և փեսայք, աղ-  
քատք և հարուստք, եկեղեցականք և աշխարհականք  
աղիողորմ կականով սկսան լալ ու գոռալ, որով-  
հետև յայտնի տեսնումէին, որ ոչ իրանց կայ փրկու-  
թիւն, ոչ իրանց ընչից ու ստացուածոց և ոչ իրանց  
սիրելեաց և ընտանեաց. Պարսիկք այս տեղ մեկ շր-  
փոթ-էլ աւելացրին. սկսան ծեծելով ու ջարդելով  
բռնադատել, որ ձայները կտրեն: Կարո՞ղ են լուռ կե-  
նալ ողորմելի Հայերը, երբ լիրդ ու թոքը փորերէն հա-  
նումէն ու ասում «լուռ կացէ՞ք»: Նոցա աղաղտկը ե՞րբ  
պիտի լռէր, մինչ նոցա արտսունքը հեղեղի ակս էին  
թափվում Երասխայ մէջ և ոռոգում նորա ափերը:

Արավար գետը իր յորձանուաներու մէջ սկսաւ խեղ-  
դոտել անտէր, անխնամ ժողովրդեան մէջէն մեծին  
ու պստկին անխտիր, որ ետևներէն սուրը տեսնելով  
և առջևներէն ջուրը՝ յուսահատութեամբ սկսում

Էին այն սրահոս ու անծանօթ գետը թափուիլ, լեզուալ, բայց ջրի ուժգնութեանը չըդիմանալով և միմեանց արգելք լինելով՝ մէկզմէկու փրկութիւնն էին խտփանում և մահու բերան մատնում։ Ով որ պինդ սիրո ունէր, ամօթը հարկին զոհելով շորերը հանումէր և այնպէս մերկ մտնում էր ջուրը, իւր հագուստը դլսին դրած. բայց ամօթխածները, որոնք որ ամաչում էին, մանաւանդ կանայք և աղջկունք, այնպէս հագուստով էին ջուրը մտնում։ Ծանրացնում էր ջուրը նոցա բեռը, ևս առաւել նորանցը, որոնք որ դրկերումք երեխայ ունէին, և ցած էր քաշում և մօրերուն և նոցա ձեռի անմեղ մանկանցը ու միտսին խեղդում։

Վիճակու կենդանիները ոգորումէին անողոք վիճակի դէմ՝ խեղդուածների դիակունքը վիրի կողմէն վայր գալով, ալեաց հետ և կենդաններու մէջ լեզ տալով ջրի երեսին՝ կամաց կամաց ջրի հետ գնումէին դէպի արեւելք և խառնվումէին ցածի կողմի խեղդվածների հետ, որ միասին կասպից ծով թափուին։ „Վայ, այս իմմայրն է, վայ, այս իմ հայրն է, վայ, այս իմ եղբայրն է, վայ, այս իմ քոյրն է, եղուկ, այս իմ որդին է, աւաղ, այս իմ գուստըն է։ ամեն կողմէն այս վայն ու եղուկն էր լավում։ Տեսնումէին դիակունքը, որ նոցա հետ խառը գնումէին, բայց ով էր մտիկ տալիս անշունչ անկենդան դիակներուն, երբ որ իրանց գրկերէն ջուրը յափշտակումէր կենդան զաւակներին։

Հփոթը թէպէտ քանի գնումէր, ինքն իրան սաստկանումէր, բայց Պարսիկք վերջապէս հասուցին կատաղութեան ծայրը իրանց բարբարոսական բռնութիւններով, երբ որ սկսան ողորմելի Հայերի ցաւը և վիշտը բազմապատկել ու շատացնել՝ ոմանց ստա-

ցուածքը ձեռքերէն խլելով, ոմանց կանայքն ու դստերքը յափշտակելով, Խղճալի Հայերի կոծն ու աղաղակը բարձրանումէր մինչև երկինք և թնդացնում էր շրջտկայ բարերն ու ձորերը. վայ էին կանչում դաշտերն ու հովիտները և նոցա աղեխարշ կողկողանքէն քարերը և վեմերը պիտի հալեին. բայց անգութ Շոհ-Արքասը և նորա անոզորմ զօրքը բնաւողորմ չէին շարժում և բնու իրանց անխողջմտանք բոնոթէնէն չէին զիջանում, ոյլ անդադար ստիպում էին Հայերին, յառաջ երթալ ու ջուրը մտնել:

Մէջերը ով որ բաղդաւոր էր, որ կամ ձի ունեք կամ մէկ բեռնակիր զրաստ և նորա օղնութեամբ հազար ու մէկ զոհեր անելով կարտղացաւ համեկ միւս երես, այնուեղ նոր և անտեկութի փորձունքի մէջ ընկառ. կամ իրան սոլանեցին պահտպան դրած Պարսիկները և ինչը յափշտակեցին, կամ կենդան կենդան տեսաւ իւր սիրելուց՝ կամ կնոջ և կամ զաւակներու գերութիւնը Ամանք-էլ, որոնք ողջամբ հառան զետի միւս երեսը և Աստուծուն վառք տալով երեսները յետ դարձուցին, որ տեսնեն թէ ուրիշները ինչ վեճակի մէջ են, աւեսան որ Երասխը իւր լայնութեամբ ուսուցել է և միւս երեսի անհամար բազմութիւնը ճապաղուել է քանի ասպարէդ լայնութեամբ և երկայնութեամբ և ետեներէն Պարսիկը նեղում են և առաջ են քշում, որ ջուրը թափուին. խել գետը, որ այս երէսէն այն երես ծածկուած է թանձր ժողովրդիան բազմութեամբ՝ ցոյց է տալս այնպիսի զարհութելի տեսարան, որ տեսնողը փշաքաղվումէ. Մեռելներն ու կենդանները խառը լեզ են տալիս, ուրնք արդէն խեղդուել էին՝ ջրի հետ էին զնում, խել այլք, որոնք դեռ շունչ ունին, ջանք են անում մահէն և մեռելներէն աղատուիլ. ոյս սկսուճառով ա-

ղաղակումեն, որ օդնութիւն հասցնեն : Աղաջող շատ  
կայ՝ լսող ոչ ոք. օդնութիւն ուզեցող անհամար՝ օդ-  
նութիւն հասցնող և ոչ մի. ամենքը խլացել են,  
ամենքը իրանց ցաւերով են զբաղած. որը հայր է  
կորցրել, որը մայր, որը եղբայր, որը քոյր, որը կին,  
որը դուստր կամ որդի, որը ինքն է մահու վտանգի  
մէջ, որն-էլ ուզումէ իւր սիրելոյն ազատել : Միայն  
անգութ Պարսիկներն են ապահով, որ նուերով անց  
ու դարձ են անում և ուրախ ուրախ տեսնում են  
Հայերի անտանելի նեղութիւնքը և ծաղը են անում: և  
եթէ մէկ Հայ ուզում է նուէն բռնել իւր կեանքը  
վրկելու համար՝ թիակով կամ թրով հասցնումեն և  
տեղնիտեղը շնչասալառ անում. և եթէ մէկին օդնու-  
թիւն են տալիս՝ այն մէկ դեղեցիկ աղջիկ է կամ  
կին, որ իրանց հօրն ու մօր դրկէն յափշտակումեն,  
իրանց ամուսիններու ձեռքէն խլում, որ իրանց կին  
կամ հարճ անեն :

Գյուղի քարքարուտ և ժայռալիր յատակը սուր  
սուր ածելիներու նման սեսլացած գայլախաղ քարերի  
և ասլառամների կտորներ ունենալով՝ ողորմելի-  
ների անսովոր և անքնտել սուրերի ներբանները չա-  
րաչար կտրտելով՝ վիրառորումէին և նոցա տրիւնով  
յորդահոս գետը ներկում և կարմրացնում էին: Ա-  
ւաղախառն սպոտոր արխմերանդ ջրի մէջ այր և կին,  
մէծ և փոքր, կենդանի ու մեռած՝ խառնիխուռն վեր  
ու վայր էին լինում. ջրի բռնութիւնը քշումէր ամե-  
նուն դէպի վայր իւր ուժդին հոսանքներով : Շատը  
այն է, որ գետափներու քարաժայոր չէ թողնում  
նորանց շուտով ջրէն դուրս գալ, ուրբ ցամաքին  
հասցնել ու աղատուիլ. այն գետեղերեայ սրածայր  
ասլառամներու դէմ ողորելով ու մաքառելով՝ մահու  
հարակ էր լինում խղճալի ժողովուրդը երասխի միւս

երեսին՝ գետի լայնութիւնը և խորութիւնը անչնարին դժուարութիւններով անց կենալէն յետ:

Առցա լացն ու աղաղակը ամենու ականջներն էին խլայնում: բայց օդնութիւն ոչ ոք չէր կարողանում հասցնել, որովհետեւ Պարսիկք այդ հս չէին թոյլ տալս, այլ իրանց-էլ բռնադատում էին, որ յառաջ երթան: Ով որ ուղումէր իւր մեկ ծանօթին ձեռք երկնցնել՝ նորան խփում սպանումէին, ինչքը և աղխամաղխը յափշտակում և ընտանիքը գերում:

‘Եթո ևս տասը բաժինի մեկը չէր մտել գետի մեջ, որ նոցա բաղմութեան մեջէն խեղդվողներու դիակունքը ծածկել էին Երասխի մկանունքը այնքան տեղ, որքան որ մարդու աչքը հեռուէն կըզօրէր տեսնել: Ի՞նչ խղճալի տեսարան էր այս: Աչքը բանար ՀԱՅԿ ու տեսնէր, թէ իւր դաւակները ի՞նչ նեղութեան մեջ էին. գլուխը բարձրացնէր ԱԲԱՄ ու Հասկանար, թէ իւր յետնորդները ի՞նչ դառը բաժակ էին խմում այն օրը. վեր կենար ԱԲԱՅ այն վիչէն, ուր որ ընկել էր նորա անշունչ մարմինը վաւաշոտ թագուհու ձեռքէն, և տեսնէր, թէ ի՞նչ խեղճութեան մեջ են իւր հայրենակիցները, որոց համար նա թափել էր իւր երիտասարդական արխոնը. տեղէն շարժէր ՊԱՐԱՅՐ և տեսնէր, թէ ի՞նչ աստիճանի է հասել իւր այն ազգը, որոյ համար ինքը Նինուէի տերակներէն բերեց արքայական թագը. թօթափէր իւր վրայէն գերազմանի ծանր հողը ՏԻԳՐԱՆ և իւր չորս կողմը նայէր, թէ իւր բարեկամ Կիւրոսի աթոռը նստող բոնաւորը ի՞նչ բորբոքեալ հնոցի մեջ է ձգել այն ազգի յետնորդներուն, որոնք որ նորա հետ զինակից էին Մարտ և Բարելացոց գահերը կործանելու ժամանակը. սթափէին Արշակունի թագաւորները և տէսնէին ի՞նչ զարհութելի մահառիթ պատ զներ էին բերել նոցա

ցանած սերմերը, որ իրանց չորս-հարիւր տարուան  
թագաւորութեան ժամանակը փշայեղձ էին արել Հայա-  
ստանի անդաստանը, որ իւր աղգասէր զաւակներէն  
ամայանալով՝ վերջին մնացորդներէն-էլ ճռաքաղ էր  
լինում:

4

Անօրէն Պարսիկք նաւակներով և լաստափայտե-  
րով անց էին կենում այս երեսէն այն երես անընդ-  
հատ, և իրանց երթալ գալու ժամանակն-էլ խեղղում  
էին խեղձ լուղորդ Հայերին, ոմանց միայն անփոյթ  
անելով և անզգուշութեամբ դիպչելով կամ վտանգ-  
ներէն անցնելով՝ իսկ ոմանց շարամիտ դիտաւորու-  
թեամբ, որ նոյա կանանց ու աղջկերանց տէր դաւ-  
նան: Ել ո՞վ էր մտածում ուկու և արծաթի համար.  
ում փոյթն էր գանձը և Ճոխութիւնը. միայն իրանց  
և զաւակաց կերանքն էին ուղում աղատել և չեին հա-  
նում: Կարմիր ծովը մեկ օր կուլէր տուել Փարաւոնի  
երեսուն հազար եզիստացի զօրքը՝ և չէ մոռացվում:  
Երասխը այսօր քանի՛ երեսուն, քանի՛ քառասուն հա-  
զար Հայ տարաւ իւր փրփրադէղ ալիքներով: Հայա-  
ստան այս օրուան օրը քանի՛ բիւր իւր զաւակներէն  
տեսաւ Երասխայ երեսին խեղղուտած, որը մերկ,  
որը հազուստով ծածանում էին. մայրը իւր զաւակ-  
ներու մօտ, կշտին-էլ ոչխարներ ու կովեր. քոյրը եղ-  
բօր մօտ, կշտին-էլ ուղտ կամ ջորի. երեխան սպի-  
տակամորոք ծերի հետ, կշտին-էլ էշ կամ այծ: Խեղ-  
ղուած, ուռած բեռնակիր անասունները, բեռները  
վրաները կապած, ջրի երեսին՝ որը լերպիւրս, որը

երեսի վրայ ընկած՝ զնումնն ջրի ընթացքով, ոմանք  
էլ ջրի տակէն նոր են դուրս դալիս:

Հայաստան, Հայաստան. շատ էիր պատահել սրա-  
ծութեան, շատ կոտորուածք էիր տեսել, սովոր ու-  
ժանուախտէն շատ մահերու էիր հանդիսել, բայց  
այսպէս աղխողորմ խեղճութիւն չէիր քաշել, ինչպէս  
որ այսօր տեսար ու քաշեցիր՝ քու դաւակներու ան-  
օրինակ և անպատմելի տառապանքներով։ Արդեօք  
եթէ կամենար կենդանագիրը դաստառակի վրայ պատ-  
կերացնել այն տեսարանը՝ քանի՛ ոչատկեր սիստի  
դուրս բերէր, որ կարողանար նորա հարիւր մասին  
մէկը ձեւացնել. կամ լուսագիրը, որ միայն մէկ վայր-  
կենի գաղափարն է յտիշտակում և արտաղատում  
մագաղաթի վրայ՝ քանի՛ անգամ սկսոի իւր արհես-  
տագիտութիւնը կրկնէր, որ կարողանար նորա հա-  
զար դիալուածոց մէկը մարմացնել. ոչ գրիչ է բաւա-  
կան, ոչ լեզու, և միտքը միայն այն է կարող իւր  
հայելոյ մէջ ցոյց տալ, ինչ որ նորա յիշողական զօ-  
րութիւնը կը բատակարարէ. մնացեալ հաղարտոր և  
բիւրաւոր կերպերը, որոնցմով որ մահը տանում էր  
իւր զոհերը, ինչպէս որ Երասխի կոհակները իւր մէջ  
անհետ էին լինում, այնպէս կը կորչին և կը նկնին ան-  
վախճան դարերու դարեկները։ Արովհետեւ քանի ա-  
պարէզ տեղ որ բռնած ունէր Պարսից բանակի լոյ-  
նութիւնը՝ այնքան ասպարէզ էր ծաւալուած այն ս-  
ղեխորով տեսարանի տարածութիւնը Երասխի դետ-  
ափումը և նոյն չափով տեղ էր ծածկում ջրի մէջ բազ-  
մութեան թանձրութիւնը, որ յետոյ դիակների աճե-  
լովը՝ գամ քան զգամ տելանում էր դէսի արհելեան  
կողմը, ուր որ քշում էր դետի բռնութիւնը խեղդ-  
ված մարդոց։ Ետեւի եկաղների սիրան ու երիկա-  
մունքը գելվում դալարվում էին, երբ որ տեսնում

էին առջևի ջուրը մտնողների խեղճութիւնը և խմանում էին. բայց ի՞նչ էին կարող անել, որ մեկ քանի վայրկենէն յետ իրանք-էլ պիտի նոյն վիճակի մէջ դանուէին :

Վերկացած իրանց ստացուածքէն. զրկուած իրանց հայրենի տնէն, տեղէն, կալուածներէն. Հեռացած բարեկամներէն. բաժնուած իրանց ընտանիքէն, ոիրելիներէն, ծանօթ տեղերէն և մարդոցմէն. աչքերովը տեսնում են իրանց մահերը, որ այն բարերար և երխտապարզն ջրի մէջ սարքել է իւր թակարդը. տեսնում են, որ կէսէն շատը ընկնումէն նորա որոգայթներու մէջ զանազան կերպերով. Ոմանց ոտքն է սահում, ոմանց գլուխն է պտուտ գալիս, ոմանց աչքերն է սեւանում, ոմանց սիրտն է սղտորվում. ոմանք թալկանում են և ընկնում ջրի մէջ ոխեղդվում, ոմանց դրաստներն են կոխում և ընկըլմում. ոմանք իրանց ծանր բեռի տակն են տկարանում և ջրի տակ գնում, ոմանց նաւերն ու լսատափայտերն են տակն առնում և ընկըլուզանում, ոմանք իրանց ծերացած ծնօղաց ազատելու համար են իրանց կեանքը զոհում, ոմանք իրանց զաւակներին են ուզում ողնութիւն հասցնել, նոցա հետ միասին մահու կոկորդն են իջնում. Առը բռնումէ իւր հարսնացուին և ուզում է հանել վտանգէն. բայց հունաւոր տեղէն զարտուղելով՝ ընկնումէ խորայատակ խորխորատը և անհետ կորչում, որն-էլ տեսնումէ, որ իւր միամօր զաւակը սրավար հոսանքի մէջ մահու դէմ մարտընչումէ, ուզում է նորան փրկել և իւր դլուխը նորա փոխարէն տալիս է փորձանքին. Եղբայր է կանչում ողորմելեաց մէկը, որ լեզ տալէն յոզնել է և չէ կարողանում նորա կոհակներու բռնութեան դիմանալ, դեռ ևս օգնութիւն չբատացած՝ թուլանումէ և վեր-

Զի՞ն հոնտիւնը ջրի տակէն է դուրս գալիս: Աւղտերը  
և այլ բեռնաբարձ գրաստները իրանց վրայ կապած  
բեռներով ջրի մէջէն անց կենալ են ուղում և ոչ ոք  
չէր հարցանում, թէ մէկ գրկաչափ տեղումը քանի՛  
հոգի են ընկլուզանում: գնումնեն ջրի մէջէն երբեմն  
քայլելով և երբեմն լուղալով. բայց դեռ չըհասած  
մէջ տեղը, եթէ մէկի տոքը գայթակղեցաւ և գլորուե-  
ցաւ ջրի մէջ, քանիսին-էլ հետն է տանում, և այնու-  
հետև իւր շրջապատումը ո՞րքան մահերու սկատճառ  
դարձաւ, մինչև որ ինքն-էլ շնչասպառ եղաւ և բեր-  
նէն ու ականջներէն ջուր առնելով գնաց ջրի յա-  
տակը:

5

Կուր գետը, որ Տայոց ամուրքի անմատոյց սա-  
րերի մէջ ունի իւր աղբերակունքը, գուցէ՝ թէ աշ-  
խարքիս հիմնարկութենէն սկսած, և որոյ գետա-  
փունքը սյս օրերումը իրանց բնակիչներէն ձուքաղ  
լինելով՝ ամայացել էին, երբ որ շատ նահանգներ և  
գաւառներ, շատ սարերու հովիտներ ու դաշտեր անց-  
նելով՝ հասնում էր այնտեղ, ուր որ իւր ջրերը խառ-  
նըլում էին Երասխի ջրերին և տեսնում էր իւր բիւ-  
րաւոր զաւակաց դիակունքը, որ Երասխոյ երեսին  
էին ծփում և անասնոյ ու չորքուտանեաց դիակներու  
հետ խառը հասնումէին իրանց ջրերուն, որ Երասխի  
արիւնաշաղախ ջրերու հետ միասին երկար ճանա-  
պարհորդակից լինելէն յետ՝ թափուէին Կասպից  
ծով: Կուր գետն եմ ասում, տեսնելով այն երե-  
խանց և ծերերու դիակունքը, որ իւր ջրերով էին

մնոնդ առել և զարգացել՝ զարհութելով, շփոթուելով և խոռվիլով հեռու էր վախչում այն դառն և կսկծելի տեսարենէն, ինչ որ Երասխ այն օրուան օրը իւր մէջ էր ցոյց տալիս, որի նմանը աշխարքի երեսին ոչ մէկ գետ չէր ցոյց տուել և չէր տեսել:

Ո՞ւ էր տեսել կամ ո՞վ էր լսել, որ գետը, որն որ իւր ջրերով այնքան հարիւր ասպարէզ տեղ է ոռողում՝ ծածկուած լինէր իւր ափերու բնակչաց ծերոց ու մանկանց, արանց ու կանանց դիակներով, ինչպէս որ պարտիզի մէջ ծառերի տակերը շատ անդամ ծածկուած են լինում կարկտահար կամ մրրկահար ծաղկունքով. քանի հաղարամեայ ծերունին ի՞նչ պիտի ասէր, երբ որ տեսնէր թէ՝ իւր զաւակունքը իւր արգանդի մէջ են կոտորվում և օտարներն ուրախ ուրախ ծիծաղելով նորանց գերսում, գեղեքում, կողոպտում, գերի տանում և իրանց բարեբաղդ վիճակի վրայ զուարժանում:

«Քանի» օր տեսեց այս մշտնջենաւոր արտասուաց արժանի տեսարանը: Ցամտքի նման էր երեւում գետը՝ մէկ երեսէն մինչև միւս երես ծածկուած լինելով դիակունքէն, որ նեղ տեղերումը բաւական անցք չըդրանելով մէկզմէկու վրայ էին բարդվում և ջրի ճանապարհը արգելում, մինչև որ ետեսէն գիշեր ցերեկ դիակներու բազմութիւնը աւելանալով՝ խափանում էին գետի սրբնթաց հոսանքը, և աղատ Երասխէն, որ այնքան ժամանակ իւր սովորական ճանապարհը զնում էր աներդեկը, մէկ ջրշիղջ էին ձեւացնում և ստիպում էին զեղանիլ:

Հահ-Արքաը այս ամեն անցքը աեսնում էր իւր աչքով և չէր դադարում. բարձր տեղումը ուկենկար խորանի մէջ նստած՝ զբոսնում էր իւր մեծամեծներու հետ այն տեսարանով և հետզհետէ նորա

կայծակնալիր հրամանը հասնում էին Պարսից դօքաբին, որ Հայերին նեղեն և ստիպեն ջուրը մտնել, որ Օսմանցոց ձեռումը չըմնան:

Արդէն կենդանի մնացողների բաղմոթիւնը, որ անցել էին միւս երես, ճապազուել էին այն գետավունքի տարածոթեան մէջ, ոյլ այնուեղ-էլ նորանց անհանդիստ էին անում Պարսից ձիաւորները, որ շրջապատ պահապան էին դրուած, որ Հայերը չըփախչին մերձակայ սարերն ու ձորերը: Ոչ անցնող ազատուողների թիւը կար, ոչ խեղզուածների հաշիւը, ոչ ետեւէն եկողների և ջրի մէջ լեղ տուողների, ոչ դեռ ևս միւս երեսում մնացողների և տեղ ու ճանապարհ բացուելու սպասողների, որ ջուրը մտնեն և ոչ նոցա ետեններէն ստիպողների: Ինչպէս որ հարիւրներով, հաղարներով և բիւրներով էին թափովում դետը, նոյն հափով-էլ միւս երես հասնում, նոյն թուով-էլ ջրի մէջ լեղնում և դեռ ևս կարդի սպասում: բայց ինչպէս այս երեսին թշնամիններէն էին կողապատճեմ, մերկանում, նոյնպէս այն երեսին-էլ. ինչպէս այս կողմին-էլ իրանց ինչը, ստացուածքը, դաւակները տեսնում էին Պարսից ձեռքը մատնուած տւար գերի, նոյնպէս և այն կողմին-էլ: Հուրը, ոուրը և ջուրը միօրինակ էին կոտորում նորանց իրանց հայրենի տան, հայրենի աշխարքի, հայրենի գետի և հայրենի գետափանց մէջ:

Պարսիկները առաջ Հայոց Աքամեծներին էին ջարդում, որ հասարակ ժողովուրդը մնայ ինչպէս հօտ առանց հովտի: Ոչ այս երեսումն էր սկակումկանչն ու չիչը, կոծն ու ողը և ոչ այն երեսումը ոչ այս կողմումն էր դադարում արտասունքը և ոչ այն կող-

մումը : Աչոք չըդիտէր, թէ իւր ընտանեաց մէջին  
ով կոյ, ով չըկայ. զաւակներէն, մերձաւորներէն, աղ-  
գականներէն, բարեկամներէն ովէ ջրատար կամ սրա-  
հար կորել, կամ ովէ կենդան մնացել : Մայրը որո-  
նումէ զստերը, հայրը որդուն, դուստրը մօրը, որ-  
դին հօրը, եղբայրը քրոջը, քոյրը եղբօրը, մարդը  
կնկան, կինը մարդուն, որդիքը ծնողաց, զաւակները  
մեկզմեկու, եղբայրը եղբօրը, քոյրը քրոջը, հարար  
փեսային, փեսան հարսին՝ բազմութեան մէջ, ջրի  
մէջ, զիտկներու մէջ, անցուդարձ անողներէն էին  
հարյնում, խուռն ժողովրդեան մէկ ծայրէն մինչև  
միւս ծայրը մոլորուած՝ վազվզում, կորիւնակորոյս  
զազաններու նման կողկողում ու կաղկանձում : Խրզ-  
վել էին ամեն կապերը, աղգականութիւնը դադարել  
էր, մերձաւորութեան յօդերը կտրուել էին . արտա-  
սունքն մթնացել էին աշերը. Եգիսկտացոց շօշափելի  
խաւարն էր պատել սոցա անտանելի թախիծը և  
և տրտմութիւնն ու տխրութիւնը : Դժդոյն դալուել  
տարածուել էր ամենի երեսին, էլ մէկի սրտումը մը-  
նացած չէր ոչ տրախութեան նշոյլ և ոչ յուսոյ կայծ։  
Վարդի նման կարմիր թշերի տեղ երկում էին մե-  
ռելի գոյն բռնած դեղնութիւն. տգեղացրել էր ողբն  
ու թառանչը չքնաղ օրիորդաց սիրալի կերպարանքը.  
ամեն տեղ տիրապետել էին պառապանք ու տաղ-  
տապանք :

Տեսնում էին ծնողքը իրանց զաւակներին Պար-  
սից ձեռքումը, մօտենում էին, որ յետ ուզենակ  
տեղնիտեղը սրախողխող զո՞չ էին լինում իրանց ար-  
գանդի ծնունդների համար : Տեսնում էին եղբայր-  
ները, որ իրանց քութերը ընկերել են Պարսից Ճօւ կը և  
չեն կարողանում աղատել, իսկ եթէ սկսում են պա-  
հանջել թաւրը փայլատակումէ գլուխներուն և քու-

բերը դառնում են պատճառ և ականատես վկաց իրանց եղբարների մահուան : Մէկը արեան մեջ է թաթաւում, միւսը տրտասոնքի մեջ ընկղմում . եղբայրը քուրի'կ, քուրի'կ ասելով է հոգին առանդում, քոյրը եղբայր, եղբայր կանչելով՝ դէսի միւս կողմը վարփում : Տեսնում է մարդը, որ իւր կինը Պարսկի ձեռին ջանք է անում . իւր դլուխը թափել պերութենքն և չէ կարողանում մօտ երթալ . մեկ Պարսկիը հարիւր սկաշտապան ունի, որ նորա սնիրութիւնը և անզդամութիւնը ծածկեն, յափշտակութիւնը ջատուգովին, արդարայնեն, աւարը թարյնեն . բիւրտու թշուառ Հայերին մեկ հատ սկաշտապանող, աէրութիւնն անող չքեկայ, որ կարողանայ ասելու „Կազմու էք կինը մարդու . ձեռքին խլում“ . Երբ որ կինն-էլ սպալեն պատովում է, աղաղակելեն ձայնը կերկերել է, յուսահատութենէն չեզիտէ թէ ինչ անէ . Հայար երնեկ է տալիս իսեղդուած դիտկներին, որ ումեն նեղութենէն ազատուել են : Անզութ Պարսկիք չեն թողնում որ կնոջ ձայնը լսուի . Խորամանկութեամբ թմբուկներ են հնչեցյում, որ լսոյի ձայնը խլանայ և ասում են . „Նա թարբոցել է, նա հենց հիմի գաւանութիւն , առւեց թէ Մահամմատ ուշուլ-ուլ-լահ արը . նա , էլ Հայ չէ, նա մահմետական օրէնքը ընդունեց և ի՞նչ , պէս է կարող Հայի կին լինիլ, բէզի կին կրդանայ, , խանի կին կրդանայ, Շահի հարէմը կ'երթայ և ոչ , թէ Հայի : Այժմ ականջ դիր, լսէ՛, թէ ինչ Հայոց յանք են . իսուսում Հայոց ազդի համար, Հայի կրօնի համար, Հայի կինցաղավարութեան համար : „Հայն , ի՞նչ է որ կին ունենայ . կըսնի դիր, վէրմէլի դիր, „Հայը Պարսկի ծառան է, արքանեակն է, զերին է, „Հայի կինն-էլ Պարսկինն է, որդին-էլ, դուստրն-էլ, „ինքն-էլ, ստացուածքն-էլ, տունն-էլ, տեղն-էլ,

, Հողնէլ, ջուրնէլ, որ երբ կամենայ՝ երտայ վայե-  
, լելու և երբ կամենայ կառնու ձեռքին. ի՞նչ իրա-  
,, ւունք տնի Հայը ուղելու կամ յետ պահանջելու:  
,, Թող շնորհակալ լինի Հայը, որ Պարսիկը թողնում  
,, է նորա գլուխը իւր ուսերի վրայ մանացնել. ին-  
,, չո՞ւ է տուել Աստուած Պարսկի ձեռը թշոր, որ  
,, Հայը համարձակուի նորա գիւրայ խօսիլ կամ ա-  
,, ուել՝ աչքիդ վրայ ունք կայ:

Ողբալէն, կողկողալէն, լալէն, սղալէն, արտա-  
սունք թափիելէն, ձեռները գէսլի երկինք բարձրացնե-  
լէն ու Աստուծուն գանգտուելէն, իւո զլսին ու գըլ-  
ելին տալէն, մաղերը ճողելէն, որտին ու կուրծքին  
խվելէն, կոծելէն ու երեսները ցտելէն աւելի էլ ի՞նչ  
կորող էին անել թէ խղճալի հայրերը, թէ ողորմելի  
մայրերը, թէ թշուառ զաւակները, թէ կոկիծէն կոշ-  
կոճուած ծերերը, թէ սպառոր, հերարձակ, զիստ-  
խոխ. պառաւները, թէ յուսահատուած, զերութեան  
մէջ մնացած կոյսերը, թէ սիրելիէն բաժնուած, վրե-  
ժով և քինու բորբոքուած երխասարդները, երբ որ  
տեսնէին իրանց աչքի լուսի նման պահած սիրական-  
ներին կամ մեռած, կամ զերի տարած, զետամոյն  
կորած, կամ դրաստների տակը ստնակոխ ճիշտծ,  
կամ կենալսն կենդան մեկզմելու ծոյեն հետայած:

Դիտակներով լիքն եր ջուրը և ցամոքը: Երտուխի  
մէջ ջրայեղձոյց մարմինները ձիներու համար էին կը-  
նում, ցամաքումը վէր ընկած, անշնչացած մէծ ու  
սկսիկ մեռածները զաղաններու և զիշակեր ու շաղ-  
ղակեր թոշններու համար էին մեռմ: Անօրէն Պար-  
սիկները թոյլէլ չեին տալիս, որ ամեն մարդ իւր  
լիրդի ու թորի կտոր մեռելին հողի տակ դնէ ու  
թաղէ. ամեն մի քայլ վոխած ժամանակը աւելացնում  
էին ստիպանքը, բռնադատութիւնը, որ շուտ շուտ

յասաջ երթան, որ ետեի եկաղների Համար Ճանապարհութեան բացուի, մեկդուկու էին սեղմում, նեղում և մղում. լայնածաւալ դաշտերը նեղ ու անձուկ էին այրան բաղմութեան, որոց մէջ անդադար Պարսիկք սաստկացնում էին շփոթը և ալիկոծութիւնը զանազան անգութ տրաբմունքով. Երեխայրը մօրերու զբիչն վեր էին թափում, դաշիճները չէին թողնում որ մայրը կռանայ և երեխին գետնէն վեր առնու, ոտքերով կոխոտում, սպանում էին երեխանց և մօրերուն-էլ մտրակներով խորովում, կամ նիղակի ծայրով խոցամ, որ ձագուկի դիտկէն հեռանայ. Փանի Հազար, քանի՛ բիւր անլեզու մանկունք, երեխայր ջրի մէջ էին կորել. քանի՛ Հազար և քանի՛ բիւր ոնմեղ տղայք, սպատանեակիք և պատանեկուհիք Պարսից Ճանկին էին մատնուել. քանի՛ Հազար և քանի՛ բիւր անարատ մանկունք և տղջկունք ցամաքումն էին կոտորուել:

6

Ծացուել էին յուիտենականութեան դոները լայն ու ընդարձակ, և յորդաբուղիս հեղեղների նման, որ խոխոջալով և ոժգին բոնութեամբ սարերէն դէպի ձօր կ'իջանեն, Հայերի Հոգիքը խուռն բաղմութեամբ պլորվում էին այն անցատակ վիհը, անց էին կենում այն օրՀառական շեմէն և զնում էին այն անդառնալի Ճանփան, ուր որ Հայերին մինչև այն օրը պնացել էին Հայեկաղնեայք և խառնվում էին իրանց նախնեաց Հոգիների հետ. Ո՞վ էր Հառականում, թէ ով ո՞ւր է գընում, ո՞վ էր իմանում, թէ ո՞րքան Հազարներ ու բիւ-

բեր զնացին տրտմութեան հովիտը. ընկան տարտարակի խորացատակ հնոցները և մատնուեցան, դժոխքի տանջանքին : Ով դիտէ թէ՝ ո՞չքան հազարներ և բլուրեր այս անցաւոր աշխարքէն փոխուեցան երանական կետնք և ժառանգեցին աղինական դրախտի քերկը թիւնների վլոյելչութիւնը :

Հայուել էին թշուտութեան դռները նոյնպէս լոյն և ընդարձակ, լայնածաւալ ծովի նման, որի մեկ երեսն միւս երեսը, կամ մեկ եղբէն միւս եղբը չէ երեւմ . Հայերի բազմութիւնը վոռել էին ընդօրձակատարած դաշտերի, հովիտների, ստորոտների և ափափայքների մլջ, և անթիւ անհամար բազմութեամբ ետևներէն ստիպանք և բռնադատութիւն ըզպալով գնումէին անձանոթ աշխարք երկարատե կա՛մ մշտնջենաւոր սկսնդիսութիւն քաշելու : Բաժանուել էին հայրենի գերեզմաններէն, բաժանվում էին նոր ու անթաղ մեռելիներէն, որոնց գերեզմանը պիտի լինէին կամ ձկների, կամ դաղանների և կամ թոշունների փորերը . և որոնց ուկերները պիտի շատ տարիներ մնացին տրեի և անձրեի տակ, մինչև որ որդներն ուտէին և ժամանակը կամաց կամաց հողացներ :

Վնաց արգեօք հող, մնաց արգեօք արօտ, մնաց արդեօք վէմ, կամ մեկ ծառ, կամ մեկ քար, որ Հայերը իրանց արտասունքով չըթրջեցին, իրանց հայրենիքի տնձու կը նորանցմէն առնելով և իրանց սրտի փրձուկը նրանց աւանդելով և նրանց դրկելով և նրանց համբուրելով և նորանց իրանց հրաժարական ողջոյնները տալով, որպէս թէ իրանց սիրելի ազգականներին, որ կորցրել էին և ծանօթներին ու բարեկամներին, որոնցմէն որ հեռացել էին, և անտէր ուանխնամ թողած մեռելիներին, որ էլ տեսնելու և հո-

դին ալահ տալու չեին կարող . նորան մեջ գտնելով և  
աւսանելով և նորանց բարեւաւ մնացէք ասելով կամ  
իրանց կորած զաւակներին և ծնողներին բարեներ  
հասցնել ապապարելով :

Ալղագարէք արդեօք նոցա լույն ու կոծը , կրվեր-  
ջանար արդեօք նոցա սուզն ու ողբը . ո՞րը թողնէին ,  
ո՞րը մուանային . իրանց երկրէն զ կուիլ , թէ իրանց  
տներէն ու տեղերէն հեռանալը . իրանց ճոխութենեն  
մերկանալը , թէ իրանց երջանիկ կեսնքէն տնանկա-  
նալը . իրանց սիրելիներէն բաժանուիլը , թէ իրանց  
սկանդիստութիւն վարուիլը . իրանց աղքատութեան  
մեջ մնալը , թէ իրանց տաժանակիր ճանապարհ քա-  
շելը . իրանց անտէր , ամայի զաշտերի և անապատ-  
ների մեջ մոլորուիլը , թէ շլիքներին տալով սարէ  
սար ու ձորէ ձոր ակամայ ընկնիլը . քաղցած , ծարաւ ,  
ցերեկը արեակէզ , զիշերը ցողատարափ կոշկոծիլը ,  
թէ սնձրեի , ձիւնի , կարկտի տակ մնալը . տօթէն շլն-  
չասպառ տաղնաօլիլը , թէ ոտքի տակէն ելուծ բարձ-  
րացած ու մինչև երկինիք հասած տւաղախառն փոշիէն  
հեղձամղձուկ լինելը . ի՞նչը սիտի նրանց սփոփեր .  
ի՞նչը սիտի նրանց մխիթարէր . ի՞նչը սիտի նորանց  
կսկիծները փոքր ինչ զոլայնէր . ի՞նչը սիտի նորանց  
մեկ ապահովութիւն հասցներ . թէ հայրը մլ քիչ լուր ,  
մոյրը կընորսդէր սուզն ու ողբը . թէ մոյրը սակա-  
ւիկ մի սուս կենար՝ զաւակները կրսկուին :

Ք ըէն աղտոտած , կենդանի մնացած , զերի չըն-  
կած , յափշտակութեան չւաղատահած պրաստները զը-  
լուխները վէր կախած՝ զնումէին իրանց տերերի  
հետ , բեռները վրէն , սայլերը դէսի առաջ եին զը-  
նում , զլում , զլորվում ճանչալով . ամենայն ինչ նո-  
րանց յուշ էր տռնում , մխոքերն էր բերում , որ սի-  
րական Հայաստանէն են հեռանում , զնում են խորին

Պարոկտոսոսն, պիտի օնց կենան Առարտատականիւ աշխարհը, եռակները թողնեն Մագոնի անապատը. Մագանգարանը, Վագիլինը, Համադանը, Գիլանը, Ճղքելով Մարաց աշխարքը և Խուժաստանը՝ Հասնեն Խոսլահան, ուր որ կարօտ պիտի մնան իրանց բնուելուց տեղերին, էլ չըտեսնեն եկեղեցիք, տաճարներ, Աստոծոյ տաճնը, չըլսին զանդակների ու կոչնակների ձայնը, չըկատարեն իրանց Հաւատքի պաշտօնը, իրանց կրօնական ծէսերը, չըվայելեն Հոգեոր ուրախութիւնը. Համարացից և եկեղեցականաց օրինակատարութիւննեն.

Ուր են սրբանուէր քահանայից դասըր. ուր են սարդաւագները և եկեղեցւոյ ուխտի մանկունքը. ուր են մաքրակենցաղ վանականները, աղօթասէր կրօնաւորները՝ աշխարքի զբաղմունքն ձանձրացած, հեռացած միանձունք և միանձնուհի կուսանք, սևազգեստ տալաշխարողք, չնաշխարհիկ ճկնաւորք. Ամենքը իրանց տրամութեան քեռների տակն են ճնշուած. զնում են աշխարհականների հետ խառն, գլուխները կախ և կորաքամակ. չէ լոկում նոցա քերնէն մէկ յուստգրական քաջալերութիւն, իքանք-էլ կարօտ են խրախուսանաց և միսիթուրութեան. տեսել են, որ եկեղեցիքը, վանքերը, մենաստանները, անապատ անունով ճղնարանները, աղօթատունները և մատուռները էրուեցան, քանդուեցան, Աստոծոյ սեղանները կործանուեցան և էլ յոյս չունին միւսանգամ տեսնել նոցա տերակները անդամ և ոչ թէ նոցա նորոգութիւնը. Ճանապարհին պիտի կոտորուին ու մնան անթաղ սնուցիլ կենդանի մնացողները պիտի հասնեն Պարոկտոսոն, սյնակեղ սլիտի տեսնեն Պարսից մզկիթները և նորանց դլիւին փոխանակ քառաթուեան կայի սուրբ նշանին՝ նոր ծնած լուսնի զերանդիի նման կիսարոլորակը դէսլ ՚ի վեր ցցուած, և պիտանոցներէն

լուն ձայնարկուների բարձրահնչիւն տղաղակը, որն  
որ նոցա ականջին պիտի հասնի գումարանի բօթի  
նման, թէ եկել էք այնպէս տեղ, ուր որ մողու-  
թիւնը քրիստոնէութեան վերջ զրեց և մահմետակա-  
նութիւնը զրադաշտական դենի Ապղենին:

7

Քաղաքների մելիքները և զեղերի տանուտէրերը,  
որ Հարիւրաւոր և Հաղարաւոր բնակիչների Հայրա-  
խնամ՝ զթով և սիրով կառավարող էին՝ այժմ մեկ  
պարկ ուսերին, զնումէին մտածելով և Հառաչելով և  
արտասուելով, Վաճառականները, Հողաւործները,  
մշակները, բեռնակիրները, արհեստաորները, Հովիւ-  
ները՝ իրանց արմատէն կտրուած, կորզուած խոտի  
նման քամու են մատնուել և ցրիւ են ընկել՝ ամեն  
մեկ ուրք փոխած ժամանակը յոդոց հանելով, ոչ ան-  
ցածներն են կարողանում միտները ըերել, ոչ ապա-  
գան պատկերացնել. այս երկուսի խառնակութիւնը  
այնուիշտ է շվաթել նոցա երեակայութիւնը և խոր-  
հուրդը, որ ոչ արածն են խմանում, ոչ ասածը և ոչ  
լուածը. միայն ոտն առ ոտն յառաջ են զնում: Հան-  
դիսպամ են սարերի կամ բարձրաւոնդակ բլուրների,  
որ հետուն երեւմ են ինչպէս մեկ յոյս տուող նը-  
պատակ, ամեն մարդ իւր մտքումը իրան քաջալի-  
րուացէ, թէ կարելի է որ հանենք մինչև այս սարը,  
և Շահի միորը փոխուի և մեզ էլի մեր տեղերը  
յետ դարձնէ: Հասնում են, մօտէն անց են կենում,  
այն յաւաղրութեան կէտը մնում է ետևները. մեկ

ուրիշ սար է, առջևները դուքս զալիս և այն են սկը-  
սամ դնել իրանց յուսոյ նալատակ և ապաւէն :

Եսակէս շատ մարդ-էլ իւր ընտանեաց և զաւակ-  
ներին քաջալերումէր, թէսկէտ իւր սրտի մէջ յոյսը  
մեռել էր, թէսկէտ իւր աչքի արտաստնքը քան զնո-  
սա առելի էր բղխում թէ՝ „Համբերենը, Աստուած  
ողորմած է. Հասնենք այս ինչ գեղ կամ այս ինչ քա-  
զաք, պիտի մեր ծերերը, իշխանները կանզնեն և խնդ-  
րեն Շահէն, որ աւելի չըհեռացնէ մեղ՝ Խօսելով,  
լալով, սկալով, քաջալերելով՝ ճանփայ են կտրում  
և Երասխի ափունքէն դեպի Հարաւ Հեռանում,  
մինչ միւսները դեռ ևս նոր արիւն արտաստնքով ջուրն  
են մանում, ալիքների դէմ ոգորում, անզօրներին,  
տկարներին, յոգնածներին, խոնջացածներին՝ ջրի ուժ-  
գնութեան զոհ դառած տեսնում, զեղեցիկներին Պար-  
սից Ճանկը լնկած տեսնում և անտանելի ու անպատ-  
մելի դժուարութիւններով և թշուառութիւններով  
միւս երես Հասնում և նոյն վտանգներուն պատա-  
հում, մէկ փորձանքէն աղատուած՝ միւս փորձան-  
քին Հանդիսում, և վերջապէս առաջինների նման  
յուսահատութեան մատնվում։ Եւ ի՞նչակէս չըյուսա-  
հատուէին, ի՞նչ կար, որ կարողանար նոցա յոյսը  
կազդուիլ և փոքր ինչ քաջալերել։

Ուիթէ կարող էր երբէք սրբակենցաղ կրօնաւոր-  
ների մաքի մէջ ծագել այնպիսի յուսոյ նշոյլ, որ  
ակնկալէին, թէ իրանց պանդիստութեան տեղումն-էլ,  
որ զնում էին տարագէմ, պիտի մէկ օր-էլ տեսնեն  
կրօնաւորաստան կամ միաբանուկեցաց բնակարան, ո-  
րոյ մէկ անքոյթ անկիւնումը կարողանան իրանց մըշ-  
տնջենամուռնչ սաղմոսերգութիւնը կատարել և իրանց  
կեանքի մնացորդը Աստուծոյ պաշտօնի մէջ անցու-  
ցանել է որ

Վիթէ յոյս կ'ունենային քահանայք միւսանգամ  
Աստուծոյ տունը կանգնեցրած, սկսյառաջած տես-  
նել, որ իրանք-էլ կարողանային իրանց աստուածա-  
պարզի կարգի և սուրբ աստիճանի պարտաւորու-  
թիւնը Աստուծոյ սուրբ Սիղանի առաջի կատարել,  
ժողովրդեան աղօթքը, սկազատախառն խնդրուած-  
ները՝ ի հոտ անուշից՝ Ստեղծողի դիմաց տարածել,  
ինչպէս բոլորասկուղ ող ջակէզ և արարշական աշ-  
խարհը և տիրական ողորմութիւնը ինչպէս երկնա-  
ձիր սկարզի իւր ստեղծուածներին մատակարարել,  
երբ որ տեսնում էին յայտնի, որ իրանք Հովիւների  
նման հարուածի տակն են ընկել ու ընկճուել և ի-  
րանց ժողովուրդը ոչխարների հօտի նման ցրուել և  
եկեղեցիներն ու տաճարները, որ նրանց վարախներն  
էին՝ քանդուել են և հիմնայատակ կործանուել:

Վիթէ քաղաքների մէջի բնակիչները, որ տեսան  
իրանց աչքով իրանց քաղաքների և նոցու մէջի բնա-  
կարանների քանդուիլը և գետնի հետ հաւասար կոր-  
ծանուիլը, կըհամարձակուեին յոյս կապել, թէ մէկ  
օր-էլ սկիտի դառնան էլի քաղաքի բնակիչ, ունենան  
տոն, տեղ, կալուած, տեսնեին իրանց ընտանիքը,  
զաւակները առաջուան նման ծաղկած, ուրախ և  
զուարթ, որ մոռայած լինին իրանց այսքան քաշած  
նեղութիւնները, աղքատութիւննեն, անանեկութիւննեն  
զուրս եկած լինին և դարձեւալ մէկ կտոր հայի տէր  
դառած և այլոց օգնութեան անկարօւու:

Վիթէ գիւղականները կըյանդգնեին սրտերի մէջ  
վստահութեան տեղի տալ, թէ մէկ օր-էլ սկիտի մէկ  
տեղ շինեն և նորա խրչիթների մէջ իրանց երեխէ-  
քով հաւաքուին և էլի ձեռք ձգեն այն անդորր, ան-  
վրդով կեանքը, ինչ որ թողին Երասխի միւս երե-  
սին և քրտնավստակ աշխատանքէն յետ զան, տես-

նեն իրանց գերդաստանը, իրանց թոնքի և սույրայի չորս կողմը բոլորուած և մտքերէն հանեն այն ցաւերը և այն կոկիծները, ինչ որ այժմ քաշումնեն Պարսից անողորմ բռնութենէն, կամ ինչ որ եռ ես պիտի քաշեն, մինչև որ հասնեն իրանց տարագրութեան տեղը:

Այսթե վաճառականները թոյլ կուտային, որ իրանց սրտերու մէջ յոյսը ցայտէր խոր կայծը, թէ մէկ օր-էլ միւսանդամ ձեռք կ'երկնցնեն իրանց վաճառաշահութեան և կը ճոխացնեն իրանց բնակուած տեղերը և իրանց տները, և որ մէկ անդամ տեսան իրանց ընչից և ստացուածների յափշտակութիւնը. միւսանդամ էլի ձեռք կը բերեն իրանց ոնեսորութիւնը և կը լցնեն ամեն առատութիւններով իրանց երկիրը և նոցա արդիւնքով կը զարդարեն կամ կը պայծառացնեն իրանց քաղաքները կամ իրանց բնակարանները և Աստուծոյ տաճարները, և նորանց ծակեալ վիճակը տեսնելով մտքերէն զուրս կը բերե՞ն այժմեան դառն վիճակի յիշատակները, որ ամեն մէկ ոտք փոխած վայրկենին հարկադրում են նրանց սրտերէն թառանչ վեր գլորել և աշերէն արտասոնք ցողել:

Այսթե արհեստառորները իրանց կներէին, որ կարծիք տանէին, թէ մէկ օր-էլ պիտի հանդարտ նրատին իրանց արհեստը բանեցնելու և իրանց բնտանեաց կերպակելու. ով պիտի ցոյց տար նրանց միւսանդամ այն ճոխ ու բաղմամարդ քաղաքները և դեղերը, որ մէջերը արհեստների հարկաւորութիւն երիէք, ամենին կաշկանդումէր յոսահատութիւնը. ե՞րբ պիտի նրանց վտարանդութիւնը վերջանայ, կարծում էին, թէ Երասխի ալիքների մէջ ըկլմեցան այն մարդոց բարեբաղդ կեանքը, որն որ նորանց արհեստներին կեանք էլլ տալիս և մարդկանց մէջ պէտք ու կարիք

էր յղանում և ծնում և ամենին մեկզմեկու հետ կապում:

Այսթէ կրակակառները թոյլ կուտային, որ յոյսը իրանց սրտերի մեջ սովորդի, թէ մեկ օրէլ պիտի կրակակի տէր դառնային, խանութմանութիւն անեն, իրանց հետ ընտելացնեն յաճախորդ գնողներին և նրանց հարկաւորութիւնը լուսանելով՝ իրանց ապրուսոր ապահովացնեն և միւսանգամ ընկերական կեանքի բաժանորդ դառնան, իրանց խանութը էլի զանազան վաճառներով զարգարեն և ապրանք հարցնողին սպարզեասութեամբ ներս հրաւիրեն, նոյս ուղիցածը տան և մեջերը ծանօթութեան և բարեկամութեան կապերը առուտուրով ամրապնդեն:

Այսթէ այդեպորձները սյնքան վստահութիւն կարող էին զգալ իրանց մեջ, որ մեկ անգամ տեսել էին նրանց սյդիքը մոխիր դարձած, թէ միւսանգամ էլի զետին կունենան և նորա վրայ որժ կրտնկեն, նորա ուռեցը տերենով և ողկուղներով ծանրացած կրտենեն, նորա բարունակներու տակը շուտքով կրզովանան, նորա խաղողի համար հնձան կ'ունենան, ուրախութեամբ այդեքտղ կ'անեն, դինին կըքառեն, քաղցուն կարասների մեջ դետինին սպահ կըտան և նորանով իրանց տրտմութիւնը կըփարատեն և կըզուարթանան, իրանց նախահայր Կոյ նահասկետի նման, և աւելորդը դինեվաճառներին կըյանձնեն, որ վաճառմուծանեն և նորա փոխարէն իրանց տան պիտոյքը կըստանան և իրանց ներկայ դառն վիճակը փոքր առփոքր կըբարւորեն:

Այսթէ հողադորձը կարող է իւր մտքի մեջ կերպարանել մեկ ապագայ երջանկութիւն, թէ մեկ օր այն հողը, ուր որ այժմ գնում եմ ակամայ, ինչպէս գերի, եզներս կորցրած, արօրներս ջարդուփշուր ա-

բած՝ էլի իմ գոթանով ակօսաբեկ անեմ, կորդոցած  
կոշտերը մշակեմ, իմ անզաստանս վարեմ ու հեր-  
կեմ, սերմորացքս ցանեմ, արտերս ջրեմ, ոռոգեմ,  
հասկերս ատոքացած գտնեմ, հունձերս անեմ, բար-  
դերս բարդեմ, խուրձերս կտալուտեմ, որսոցքս տա-  
նեմ առն, կամասայլով և ճառճոտով կալիս մէջը  
կտակեմ ցորենս, գարիս, հաճարս և ամեն գետնաբայս  
ընտեղինս շոեմարաններիս մէջ մժերեմ, յարդերս  
ժողովիմ; եղներիս շնչքին լուծերը հանեմ և ձմեր-  
նային հանգիստը իմ ընտանեաց մէջ վայելեմ.

Ո՞ի՞թէ պարտիզանները կը թողնէին, որ յոյսը ի-  
րանց սրտերի մէջ գլուխ բարձրացնէր, թէ մէկ օրէլ  
կրկին գետնի տէր սիտի դառնայ, ճառեր տնկէ, ա-  
ռաջ բերէ, պարտէզ շինէ, աղբիւրներէն կարկաջա-  
հու առաներ ներս վազեցնէ և տօթակին տապերէն  
տոչորուած տոնկերը սառնորակ ջրերով զովայնէ,  
սաղարթները, ընձիւղները, բողբոջները և ոստերը  
դալարացնէ և պտուղները հասցնէ, և երբ կթելու  
ժամանակը հասնէ՝ ընտանեք և դաւակներով նորանց  
սլողալից և բարդաւաճ յուռթի թեւերու տակը ու-  
րախութեամբ աշխատի և հիւղերի մէջ ժողովէ, պա-  
ղատիսներ շինէ, միրգ չորայնէ, արմտէք համբարէ,  
և ձմեռնային սլաշար սկատրաստէ թէ իւր տան հա-  
մար և թէ մրդավաճառ խանութանների կրսկակների  
համար:

Ո՞ի՞թէ հովինները, որ աչքով տեսան իրանց հօ-  
տերի ցրուիլը և մէջերէն սկարարտ դառները Պարս-  
կաց անցադուրդ կոկորդը մտնելը, որ դայլերի նման  
էին նորանց վրայ յարձակում և գիշատում և շրտե-  
ցնում ու սարերի և ձորերի մէջ գաղանների համար  
սկատրաստի կերակուր թողցնում, մաքերէն կ'անցու-  
ցանէին, թէ մէկ օրէլ պիտի հօտեր ունենան, խոյե-

թի և մաքիների սերունդը տեսնեն, դասների սե ,  
սպիտակ ու խարտեաշ գոյներով ու բախանան, ու լերի  
օստոստելով կուտրճանան, խաշինքի կաթնով, կարա-  
գով, մածոնով, սկանիրով, եղով ու սրբիւսակներով  
կշտանան, նորանց փափուկ ու ճարսկալիր մոերով  
յագենան, մինչ որ քաղցած, ծարաւ և փոշէհեղձոյց  
գնում են հեռու և անդառնալի ճանապարհը և տես-  
նում են, թէ ի՞նչպէս Պարսիկը զալիս են և յափրշ-  
տակում գառները և ոչխարները, որոնք որ ջրէն ու  
յափշտակութենին աղատուած՝ դեռ ևս մնացել են  
իրանց տէրերու ձեռին և տէրիբն-էլ նորանց իրանց  
կենցաղավարութեան վերջին միջոց և տալաւին են հա-  
մարում և այն պատճառաւ անխայում են ուտել,  
խնայում են իրանցմեն և իրանց ընտանիքին, բայց ան-  
ողորմ Պարսիկը զալիս են համարձակ, մեկի տեղ եր-  
կուսն են սոնում, մորթում, քերթում, ուտում և  
կրծած ուկորներն ու փորի աղտեղութիւնը տիրոջ-  
ների երեսին շալրտում անողորելի հայհոյանքով,

**Ա**յսի թէ մշակները, որ իրանց կեանքը անցնումէին  
աշխատանքի, մ.ջ իրանց քաղցր և սիրելի հայրենի-  
քումը, կարող էին մոքելին անց կացնել, թէ էլի կը-  
գտնեն իրանց աշխատանքի մոլախոտուած ճանփան,  
և դառնութեամբ վաստակած հացը ախորժութեամբ  
կ'ուտեն իրանց դաւակների հետ և էլի առաւօտները  
վաղայարոց լինելով արևի ծագման հետ կանուխ ի-  
րանց խրձիթներէն դուրս կուդան և երեկոյին յոդ-  
նած և խոնջացած թոշունի նման շիւզը թերնին տուն  
կըդառնան, իրանց ընտանեաց զիրկը, ուր որ իրանց  
կանայքը և երեխիէքը առաջ կըդաղեն Ճովողելով ճընճ-  
դուկների ձագերի նման թերանները բաց, որ հայրը  
մէջը դնէ հաց,

**Ա**յսի թէ քաղաքների և գեղերի մէլիքները կամ

տանուաէրերը (որ կամ ժողովրդեան Համախռոմք  
ընտրութեամբ, կամ իշխանների և խաների Հրամա-  
նով էին ընտրվում և Հաստատվում, բայց պաշտօնէն  
դուրս դալին յետ՝ էլ չեին հորոյնում ժողովրդեան  
տոջե յարգն ու պատիսը, թէ մեկ տորով լինէին  
ընտրուած, թէ երեք, թէ եօթը կամ տասը, կամ  
քանի տարով որ ժողովուրդը կամ իշխանութիւնը  
կամեցած լինի և Հաճեցած, և այն մէլիք կամ տա-  
նուաէր անունը պահումէին և կրում առանց պաշ-  
տօնի-էլ մինչև ցմահ, քանի որ կենդան էին) կարող  
էին ակնկալութիւն ունենալ, թէ էլի սլիտի նատեն  
մեկ օր ծերերու ժողովքի մ.ջ և իրանց Հայրենի ա-  
ւանդութիւններով ժողովրդեան Հովուութիւն անեն,  
արդարութեամբ և իրաւամբ դաստատաններ կտրեն,  
վեճեր զաղրեցնեն, խաղաղութիւններ սերմանեն, ժո-  
ղովրդեան Համար բարի օրինակ զանան, երիտա-  
սարդների և պատանիների Համար առաքինութեան,  
բարեգործութեան առաջնորդ և Ճանասլարհ ցոյց տը-  
ւող լինին, որ նրանց տեսնելու ժամանակը Հարուստք  
ու աղքատք միօրինակ պատկառեն, լաւերը նոցա մ.ջ  
գտնեն իրանց ուղիղ վաշքին և բարի բարքին Համար  
պաշտսան և ջատագով, խկ վատերը նոցա ստուերէն  
ևս դողան և որուէս սուրէ սասանին, իմաննալով որ՝  
նոցա ձեռքն է տուած այն գաւաղանը, որով որ նոքա  
նորանց մ.ջ յանցանքը պատուհանին և բարոյակա-  
նութեան ապականութիւնը ողղեն և խրատեն:

**Ա**յսթէ ջրազայտանները կտմ ուրիշ աղօրեսկան-  
ները, որ իրանց աչքով էին տեսել, թէ ինչպես Պար-  
սիկը Հուրն ու սուրը ձեռներումք՝ այրել, կործանել,  
քանդել էին իրանց աղօրերը, ջրազայների թումբերը  
աւերել, ջրերը վաղեցրել, Հողմաղացների թևերը  
ջարդել, քարերը կտորնել և ջուրը ձգել, սրուերու-

մ.ջ կուտային , որ յոյսը առեր թէ՝ էլի կ'ունենաք ջրաղացքներ , էլի կ'աղտք ալիւր , էլի ձեր շարմաղուն նաշիհով մարդիկի նկանակներ կ'եփեն , կրկերակրուին և առաջաւորութեան հայր կրմատչի սուրբ Սեղան և քահանայական կարգը կրմատուցանէ անարիսն սպատարագը և . արժանաւորները կրհաղորդուին սուրբ Խորհրդին և նշխարները մասն մասն կրբաժանուին ժողովրդեան :

Ասյլասլանները , որ տեսան իրանց ձիերի և եղների յափշտակութիւնը , իրանց սայլերի խորտակումը՝ մի թէ կարող էին յուսաւ , թէ մեկ օր-էլ իրանց զոյդքը կրլծուին սայլին և անիւնները Ճռչալով՝ գեղէ գեղ , քաղաքէ քաղաք կրկրեն վաճառականների բարիքը և ասլրանքը . Հինգը , տասը , քսանը միասին հաւաքուած՝ սայլորդութիւն կ'անեն , կրկաղմեն իրանց կարաւանը և որ կողմը որ երեսները դարձնեն՝ այն կողմը կրտանեն առատութիւն և լիս թիւն , և այն տեղի աւելորդը կ'առնուն և կրտանեն կրհացքնեն այնպէս տեղ , ուր որ կարօտ են նրանց և այնպէս իրանց կեանքի շատը անիւնների վրայ անց կացնելով՝ իրանց հասած տեղերէն կրմերժեն , կրտարագրեն պակասութիւնը և նուազութիւնը , որ կեանքի միւս մնացած մասը ապահոված՝ իրանց ընտանեաց և զաւակների կեանքի հետ կցորդեն :

Ճեռնակիրները , որ ամեն կողմերէն հաւաքվում էին մեծ մեծ քաղաքների մ.ջ , որ նոցա բնակիչների կարիքին պետք դան , մի թէ կրհամարձակէին յուսաւ , թէ մեկ օր էլի ոլիտի այն Ճոխ ու հարուստ վաճառականներին կամ մեծատուն քաղաքացիներին հանդիսին և նոցա ծանր բեռները իրանց ուսերի և թիւկանց վրայ դրած՝ տեղէ տանեն , որ նորա

վարձով իրանց տունն ու տեղը սկահեն և իրանց գերդաստանը սնուցանեն :

Ենդէորդները և խաշնաբաճները գնումեն խառն՝ իրանց ջուրէն, մահէն և յափշտակոթենէն աղատված ընտանիքի և զաւակների հետ, տեսելէին իրանց անդեաների և խաշինքի անտէր մնալը, ցիր ու ցան ցնդիլը, շրանելով սլակսիլը և յափշտակոթիւնով նուազիլը, գետակուր լինելով սպառիլը. այժմ տեսնումեն իրանց ողորմելի գերդաստանների կողկողադին լայն ու սուզը և նոցա միսիթարելու համար միթէ կարող էին ասել „Սուս կացէք, Աստուած ողորմած է. Էլի կունենանք այն կովերն ու ցուլերը, այն զուարակներն ու երինջները, այն հորթերը և այն ոչխարների ու դառների հօտերը, կամ այն ուղտերամակները, ջորիների ջողերը և էշերի նախիրները“ . միթէ չդիտէին, որ այնքան ճոխութիւն շուտ չի հաւաքուիլ. քանի քանի պորտ նախնեաց աշխատութեան պտուղ էին, որ որդւոց յորդիս անցնելով՝ իրանց ժառանգութիւնների մնացելի իրանք-էլ օր ըստ օրէ աւելցնելով՝ հասցրել էին այն դրութեան, որ դրութեան մէջ որ հասաւ նրանց Շահ-Աբրասի հրամանի շանթիկը և վեր ՚ի վայր տասկալեց նրանց անդեաններու և խաշինքների պարերը և երամները, և իրանց, որ քաղցր ու անդորր կեանք էին վայելում իրանց հայրենի երդի տակ, հասցրուց այն թշուառադրատութեան և յետին տառապակը թշեան :

Առարդները գլուխները կախ գնումէին՝ ձեռները ծոցերը գրած : Նրանց ձեռքէն խլել՝ առել էին Պարսիկք իրանց հրայանները, զնդակները և վառողը, նոցա թողել էին անդէն : Երկնքումը տեսնում էին, որ թոշունները երամ՝ երամ, հոլաթե, սաւառնաթե և սրաժն լեզնում էին : Գուստը առատ-

առներով լիքը՝ ասում է „Հայրիկ, մեկ տե՛ս, թէ ի՞նչ  
սադ է թոշում կամ բաղ։ Ողորմելի հայրը չէ համար-  
ձակում աչքը երկինք բարձրացնել, որովհետեւ նորա  
աչքին աշխարք մթնացել է, ո՞վ գիտէ, թէ իւր ըն-  
տանեաց մեջ ն ո՞ւմն է կորցրել. փեսացու որդո՞ւն,  
թէ հարսնացու դստերը։ Թէսլէտ զտւակին մխիթա-  
րելու համար ասում է. „Հա՛, դստրի՛կ, ես ևս տես-  
նում եմ, շատ լաւ որս է. Աստուած ողորմածէ, կ'եր-  
թանք մեր տեղը, ելի կը բերեմ քեզ համար այդպէս  
սադեր ու բաղեր։ բացց իր սրտումը ասում է „Սուտ  
ես ասում, քեզ ո՞վ կուտայ օտարութեան մեջ այն  
գնդակիները, այն վառօդն ու այն հրացանը, որ մազէ  
չէր վրիպեցնում, որ դու կապուտ ամպերումը հաս-  
ցնես արագաթե թոշունին ու ցած բերես. այն բա-  
ները Երասխի մուս երեսում մնացին. այն օրերը Ե-  
րասխի հոսանքների մեջ ընկղմեցան. գնա՛ Պարսկաս-  
տանի տօթագին և տաղախառն քամին կուլ տալու,  
այն անտապտների մեջ, որ որ հրալիր Սամ հողմը  
Հայտատանի զովարար հովի տեղ է փշում։”

Սսակործները երբ որ մտքերն են բերում այն  
գէր ու պարարտ մները, որն որ իրանք վաճառումէին  
տուած, և այժմ տեսնումէին իրանց ընտանեաց երես-  
ների գոյնը, որ դալիահար էին դարձել քաղցածու-  
թենէն՝ հառաջանքը սրտերի խորը տեղերէն վեր էին  
թոշում. ինչպէս ծխնելոյզ շնչահաններէն հնոցի կայ-  
ծախառն մուխը, և ասումէին իրանք իրանց „Էլ ո՞վ  
պիտի տայ մեղ այն օրը, որ մենք մեր խանութների  
մեջ տեսնենք շուշանի և վարդի նման փայլած սալի-  
տակ ու կարմիր մսերը կարթերէն կտխած և անց ու  
դարձ անողին բարձր ձայնով հրաւիրենք միս առնե-  
լու մեր շիշակի աղդրերն ու կողքերը դովելով. նորա  
երիկամունքը և փափուկ մսաններու կտորները տուն

տանենք, որ մեր ընտանիքը շամկուրի վրայ հասցընեն և խորովածներով մեր սեղանը զարդարեն :

Դերձիկները գնում էին իրանց երեխանց հետ, երբ որ տեսնում էին նորանց կամ այլոց մերկութիւնը՝ մտքերն էին դալիս այն ժամանակները, որ տարին տասներկու ամիս կարէն ու կարկըտանէն աչք ըբրանալով՝ տմենի համար զանազան հագուստներ էին կարում, այժմ իրանք-էլ մերկ են, իրանց ընտանիքն-էլ պատառուտուն հնոտիների մէջ քրծաղգեաց: Ով պիտի տար նրանց այն սկաստառները և այն մետաքսեայ կերպասները, որ կարեն ու կարկըտեն և վարձ ստանան: Թէսպէտ այնքան բաղմութեան մէջ մերկանդամ, մերկամտրմին տկլորներ շատ կան, բայց նոքա-էլ նրանց նման տնանկացել և տղքատացել են, Պարսից ձեռքով են կողոպտել և յափշտակուել. վերարկուն արեւելք են փախցրել, բաճկոնը արևմուտք, շապիկը հարաւ, վարտիկը հիւսիս. և այն մերկութիւնը ծածկելու համար՝ ոչ թէ ապրշումի ըլգեստներ պատրաստելու կարողութիւն ունին, այլ մէկ կտոր մօրթիի, սլրտուի կամ քուրձի կարօտութիւն. եղուկ են կանչում անցած գնացած ժամանակներին, երբ որ մէկ կանգուն, մէկ մկրատ, մէկ ասեղ իրանց բոլոր գործիքն էին, բայց իրանց կենցաղավարութիւնն էին ասկահովում, բաղմամարդ քաղաքների և մեծ մեծ աւանների և գեղերի մէջ հարուստների նման բերկրալիր կերանք էին անցուցանում, և ուրախ էին հոգւով և զուարթ սրտով:

Խնչ միտք պիտի անէին արծաթազործները և ուկերիչները, որ մէկ ժամանակ Հայաստանի չքնաղտիկնանց և օրիորդների համար զանազան ոսկեղէն զարդեր և արծաթի անօթներ շինելով՝ իրանց ընտանեաց օրական ապրուստը և տարեկան պարէնն էին

Հայթայթում. այժմ ուր են այն Ճոխութիւնները, այն հարստութիւնները, Փափկասուն տիկնայք և նոցա մատաղաւուրց գուստրերը ընկել են չքառորդ թերան վիճը։ Երբ պիտի նոքա ուկու և արծաթի երեսը տեսնեն. երբ ոլիտի նոցա միտքը դան կանացի զարդարները։ Արթէ քաղցածը միտքը կը բերէ ուկի դօտին կամ ականակուռ քառամանեակը, կամ ծարաւին և մերկը կը յիշե՞ն արծաթի կոնքը։ Արթէ ակլուբը կ'առէ „Երնէկի թէ դոհարազարդ ապարանջան ունենայի“ . կամ մէկ կտոր Հացի կարօտը կ'առէ թէ „Խնչի գեղեցիկ զմրուխտի օղեր ու դինդեր չունիմ“ . Հասարակաց էր տնանկութիւնը. աղքատն այնքան չէր կորցրել, որքան որ Հարուստը. Բարձր տեղե՞ն վիք ընկնողը աւելի ցաւ էր զգում. խեղճութիւնը ամեն տեղ տարածուել էր և նորու ապառնեաց Համար ըստանալիքը զարհուրելի էին երեսմ՝ մտածողների աշքումը. Եւ ո՞վ կար, որ չըմտածէր։

Առածումէր կօշիակարն-էլ, մտածում էր դառկ կարողն-էլ. թէսկտ մէկ խժան կամ մէկ առեղ ութիւն գտնելի շտու դժուար չէր, բայց ո՞ւմ Համար սկիտի կարէին այն կօշիկները, կամ ո՞ւմ դլխուն դրնէին այն դտակները. Կա որ Հաց չունենայ ուտելու, միթէ ոտքը բորլիկ և դլուխը բաց չէ կարող շրջել դրնէ գուռն մաւրալու. Կ՞նչ յոյս ունենայ արհեստաւորը. միթէ ուր որ պնում են՝ այնտեղ արհեստաւորները քիչ են. Կ՞նչ յաջողութիւնն ոլիտի յանկարծ հանդիտէին Հայերը, որ երբ տեղ Համան՝ իսկոյն սկսեն իրանց սյսակիսի մանր մունք պակասութիւնները հոգալ, դտակների և կօշիկների Հարկաւորութիւն զգալ. Բացազլուխ և բոկոսն ման զալը զեռ ևս աղքատութեան ծայրը չէ. Այն է մարդուս աւելի չարչարողը, երբ որ սովատանջ և սովալլուկ՝ մէկ կը-

տոր Հացի վրայ Հազար աչք կը տեսնէ յառած բեկած, և երբ որ որովայնը խը բռնութիւնը դործ ածելէն յետ՝ տեսնելով որ մէկ դարման չըկայ՝ կը սկսի խը իրաւունքէն Հրաժարութէ և միւս անդամներին էլ խը նման դատարկացնել. Այն ժամանակը, երբ որ աչքը կը սկսի միջնանալ, ձեռները ժուլանտլ, ոտները տկարանալ և մարմնոյ ծանրութեան տակը ծալվել, այնժամանակը, երբ որ աշխարքը կը սկսի նորա դլխուն սկսուտ դալ, ինքը ոչինչ չի տեսնիլ, չի լսիլ, միայն կ'իմանայ, որ ներքսելն մէկ ուժգէն աղաղակէ լովում թէ „Տուր, որ տակմ, ապա թէ ոչ ինձ էլ քեզ-էլ կը սպանեմ“, այնժամանակը ոչ թէ միայն յօժար կը լինի դտակը տալ կամ կօշիկը այլ բոլոր բատակուածքը, դուստրը, որդին, կինը և խը իսկ կեանքը, միայն թէ մէկ փշուր Հաց առնու: Այս է մատածում սլղնձագործն-էլ, քարահանն-էլ, այս է մատածում կաւագործն-էլ, բրուան-էլ: Ապա ամենքը իրանց արհեստն այն ժամանակն են կտրող դործ ածել, երբ որ աշխարքը ծաղկեալ լինի խաղաղութեամբ, Հանգստութեամբ և անդորրութեամբ. քաղաքները, դիւղերը, գիւղաքաղաքները, աւանները լիքը լինեին բազմամարդութեամբ, տները շեն լինեին բնակիւներով և նրանց ճոխութիւններով: Երբ որ տունը Հաստատ է Հիմքի վրայ՝ այնտեղ սլղնձգործը կ'ունենայ նորա յղիսութեան մասնակցութիւն, նորան բրտի անօթների տեղ սրբնձեղին կ'ապսսրեն և նա նորա վարձնիլ խը կենցաղավարութիւնը առաջ կը տանի: Կաւագործն-էլ, բրուան-էլ, քարահանն-էլ Հաց կը լիդանին, ուր որ կայ նոցա արհեստակերտուածներին կտրօտութիւն և Հարկաւորութիւն. Երբ որ մարդիկ դետնափոք այլիքին դուքս գան՝ աղիւս-էլ սկսոք կը լինի տուն շինելու. Համար, քար-էլ սկսոք

կուդայ հիմունքը դնելու համար, առաղձագործներ  
և փայտավաճառներ-էլ պէտք կրթնին յարկերը ծած-  
կելու համար, կարասներ, բղուղներ պէտք կրթնին  
գինին ու ձեթը, եզն ու պանիրը մառաններումը պա-  
հելու համար, Թոները, առաստաղները, արկղները,  
դարեկները, սլահարանները, երեխանց օրօրոյները  
շինելու համար՝ պէտք կրթնին հիւսներ, փայտա-  
գործներ, ճախարակագործներ. առաղձագործներն-էլ,  
փայտագործներն-էլ կ'ունենան առուտուր : Այս ա-  
մենը կապուած են աղատութեան, խաղաղութեան և  
շինութեան հետ :

Ապա եթէ մարդիկ հաղիւ կարողանան գտնել  
խորափիտներ՝ նոցա ի՞նչ հարկաւոր կրթնին քարա-  
հանները, աղիւսագործները, ճարտարապետները.  
երբ որ գժուարութեամբ ձեռք հասցընելու լինին  
յարկածածուկ տեղերի, ուր որ զոհ լինին, թէ կա-  
րողանան գետնախշոի կեանք վարելու դաղանների և  
անասունների նման՝ ո՞րտեղաց սիտի նոցա միտքերը  
դան աթուներ, նստարաններ, տախտեր, սեղաններ,  
հայելիներ, գոյնզգոյն առաստաղներ, պատուհաններով  
զարդարած որմեր, դրուագներով ոկրճացած դըռ-  
ներ, լուսամուտներով շքեղացուցած ձեղունահաններ,  
տախտակամած երգերով և յատակներով վայելչաց-  
ցած պատշգամբներ և վերնսցարկ դստիկոններ :

Այս ամենը Հայերը թողել էին իրանց քաղաք-  
ների մէջ, Երասխը ընկել էր նոցա մէջ և նոցա  
անցեալ կեանքի մէջ, Միայն յիշատակների մէջ էր  
մնացել այն երջանիկ կեանքը,

Վառանալ է հարկաւոր այն առարանները, այն  
մեծաշէն զարպասները, այն բազմայաք կ տները, այն  
վիմարդեան վայելչասակ տաճարները, այն դմբե-  
թաղարդ եկեղեցիները, այն ճոխ ու հարուստ չք-

նաղագեղ շինուածները և մտածել այն աղքատոթեան և տառապակիր կեանքին համար, որոյ մէջ դեռ ևս նոր են մտնում նոքա, որոնք ողջամբ անց են կացել Երասխ և դեռ ևս շատ հաղաբք և բիւրք կան, որ առջեները միայն Երասխի ջուրն են տեսնում և անձանօթ են այն տնանկոթեան, որոյ մէջ սլարանոցաթաղ են եղել հաղաբք և բիւրք և ոմանք էլ դեռ ևս ջրի մէջ լող տալով՝ նոր են սկսում ըզդալ անողոք ճակատաղի ճանկի ծանրութիւնը :

Երդէն առաջաւոր նախընթայները, որ սյն թշուառ դադիթականութեան յառաջընթաց կտրասլետներն էին, ողտերով, ջորիներով և էշերով, ձիերով և եղներով, գրաստներով կամ սայլերով, ուրքան որ կարողացել էին աղատել կամ ջրէն կամ Պարսից ձեռքէն սնձնասկահ լինելով և անվեաս հացընել ցամաք՝ հասել էին առաջին իջևանի տեղը, որն որ նշանակուած էր առաջին օրուան համար, որ սյնտեղ սլիտի դադիթականութիւնը այն անմոռանալի դիշերը անց կացնէր : Արժիթ սոցա մէջը լոել էր սուզն ու կոծը, միթի սոցա մէջ դադարել էր ողբն ու լոցը, ով դիտէր թէ՝ ով ում դլուխն է լաց լինում, արդեօք կի՞նն է կորցրել մարզուն, արդեօք մարդն է կորցրել կնկան, արդեօք հայրն է կորցրել հօրը, արդեօք որդին է կորցրել հօրը, ամենքը կականումնեն, ամենքը արտասվում։ Թեռ ևս նոր են ոտք կոխել սկանդիսութեան մէջ, դեռ ևս նոր են անց կացել ջուրը, դեռ ևս առաջին օրն է, որ եկել են այս երես :

Յակէտ շատ օր էր, որ իրանց տներէն, տեղերէն, հայրենիքէն հեռացել էին և վարուած, քշուած բեր-

վել էին Արարատեան դաշտերը, բայց դեռ ևս չեն հասկանում, թէ ի՞նչ նեղութիւններ կային նոցա առջել: Ամեն մարդ կարծումէր թէ՝ իւշ է զնում կամ ուխտատեղի. ամեն մարդ ինչ որ կորցնում էր, առամ էր՝ այս վերջին վնասը է, մէկ-էլ չի պատահիւ: Երբ որ տեսան թէ՝ ինչ որ խնայումէ, ջուրը՝ Պորսիկը են յափշտակում, բայցուեցան նրանց աչքերը, իմացան թէ՝ ի՞նչ խորացատակ անդնդասոյզ վիչ կոյ առջինները և յուսահատոթիւնը պատեց նոցա չորս կողմէն:

8

Եյտեղ իմացան Հայերը, որ լաւ կ'անէին, եթէ միասին հաւաքուէին և Պարսից գէմ թուր հանէին, վոխանակ ընծաներ և ալարդեններ տալու՝ ոռուքի և արճճէ գնդակներ շալուտէին: Անչ ալիսի լինէր գործ վերջաւոր թիւնը: Եթէ յաղթէին՝ այն է որ Պարսիկը կըհեռանային և սմանցիք կըհասնէին, ինչ որ լինելու էր՝ այն կըլինէր. իսկ եթէ յաղթէին՝ այն է որ կըկուտորուէին և իրանց ինչքը և ստացուածքը և զառակները կ'ընկնէին Պարսից ձևոքը: Միթէ որ Պարսից չընդդիմացան՝ քիչ կոտորուեցան, քիչ գերի տուին, քիչ աւագ կապուա և կողապուա, թողին թշնամեայ ձևոխն: Հայերը սյստեղ իրանք իրանց դաւեցին, իրանք իրանց ազգութիւնը զաւաճանեցին, իրանք իրանց բարեբաղդութեան դարան գործեցին:

Այսքան անհամար բազմութենէն հազիւ թէքսան և հինգ հազար գերգաստան ողջամբ տեղ հասան, և խորին Պարսկաստան պանդուխտ դնացին.....

Հայերը անց կացան վերջապէս Երասխի այն երեսը, ետևներէն անց կացան Պարսից զօրքը և ամենի ետևէն անցաւ ինքը Շահ-Արքասը։ Այս արխւնուշտ բռնաւորը աչքով տեսաւ, թէ որքան դիակունքը լեղ էին տալիս Երասխի կոհակների մէջ և այնքան կամ աւելի-էլ պառկուտած էին Երասխի միւս երեսին ցամաքի վրայ՝ պատերազմի տեղի պէս. չէր հարցնում անօրէնը, թէ ո՞վ է նրանց կոտորել։ Մանկունք կանայք, աղջկունք, պատանիք, պատանեկուհիք, երիտասարդներ, ծերեր, աշխարհականներ, կարգաւորներ՝ ակլոր ու անթաղ ընկած էին ճանապարհի վրայ։ Մի թէ չիմացաւ անդութը, որ սոքա ամենքը զոհ են եղել Պարսից անօրէնութեան. մի թէ չիմացաւ որ՝ նոքա այն պատճառաւ են կոտորուել, որ Պարսիկք նոցա աւարներով ճոխանան։ Այս՝ պատերազմի մէջի կոտորուածք չէր։ Այստեղ մէկը անդէն, միւսը սպառազէն, մէկը Տլու, հնազանդ, միւսը յանդուզն, անողորմ։ Մէկը խլել է, յափշտակել է, կողոպտել է, մերկացը ել է. միւսը տուել է ինչքն-էլ, ստացուածքն էլ, զաւակներն-էլ, ընտանիքն-էլ, կեանքն-էլ։ Ի՞նչ ասաց իւր սրտի մէջ մոլեռանդ մահմետականը. ի՞նչ ասաց իւր մերձակայ իշխաններին, երբ որ տեսաւ այս ողորմ տեսարանը. մի թէ դալարեցան աղիքները. մի թէ գելուեցան երիկամունքը. մի թէ կոկըծաց սիրոը. մի թէ խարշուեցան, տոչորուեցան լերդ ու թոքը. ո՞չ. ժալտաց անհաւատը և ծիծաղելով ասաց՝ „Կօչաղ դղլքաշ”։

Ահա այսպէս էր ամեն ժամանակ-էլ Հայերի թշուառութիւնը. Քանի անգամ Հայաստանը մտաւ, ելաւ օ-

տարների ձեռք. քանի՛ անգամ նորա բնակիչները խը-  
մեցին դառնութեան բաժակի մըռուրը. միշտ այս է ե-  
ղել վերջը, որ թշնամին նորա թշուառութիւնը տես-  
նելով, կարծել է թէ՝ այն իւր քաջութեան յազմա-  
նակն է:

Պիտի առեք „Հայերը տկար էին, անզօր էին, չէին  
կարող ոչինչ անելու“: Ես կ'ասեմ. Զուր է ձեր կար-  
ծիքը և սուտ է բոլորովին, թէ Հայերը իրանց զօրու-  
թենէն ընկած էին: Հայաստանը այս աւերածէն յետ  
էլ, այս քաննդութենէն յետ-էլ, այս ամայութենէն  
յետ-էլ, էլի ունեցաւ բազմամարդ բնակութիւն, էլի  
նոցա մ.ջէն յառաջացան քաջ որդիք: Շահ-Արասի  
ահօրէնութենէն յետոյ Հարիւր քսան տարի որ անց  
կացաւ՝ տասնութը դարու սկիզբը բարերեր և լեռ-  
նացին Վարարապու երկիրը, որ Երասխ և Կուր դե-  
տերի մ.ջ է և բաղկանում է Արցախի, Սիւնեաց և  
Ուտեաց աշխարհներէն, որ անմարդաբնակ անապատ  
էր շինել Շահ-Արասը, բացի Հարիւր-Հազար մահմե-  
տական բնակիչներէ, ունէր երկու հարիւր Հազարէն  
տելի Հայազդի ճոխ, Հարուստ և քաջ բնակիչը  
(թէպէտ և Հարիւր տարի առաջ ամայի էր): Վարա-  
րապը Հայաստանի մեկ նահանգն էր, որ բաժնուած  
էր Հինգ մելիքութիւն՝ Զարարերդ, Գիւլիստան, Վա-  
րանդայ, Խաչէն և Գիղակ, որոնց կառավարողը էին  
մելիք անունով Հայազդի քաջ իշխանը: Թողունք այն,  
թէ այս մելիքները ինչպէս ընդունեցին Մեծին Պետ-  
րոսին Ռուսաց կայսերը, երբ որ նա եկաւ Թարբանդի  
վրայ, Գաւիթ-Բէգ Սիւնեաց Հայկազն իշխանը 1722  
թուին Երասխի զետափումը հաւաքեց մեկ քանի Հար-  
իւր մարդ և նրանցմով Հայերի Համար մեկ անկախ  
իշխանութիւն հիմնեց և դէմ դրեց Հազարաւոր և  
բիւրաւոր Պորտից և Օսմանցոց Համանգամայն:

Այս Դաւիթ-Բէգը այս քաջութիւններն էր անում մէկ կողմումը՝ միւս կողմումը նորա դաշնուկից զօրապետները՝ Ավան-Խան-Միրզա և Ավան-Խան-Խւզբաշի պաշտպանութիւն էին անում Ղարաբաղի սահմանագլուխներին։ Վեց տարի քշեց անյաղթելի Դաւիթ-Բէգի տիրապետութիւնը, որին օդնական գլունուեցան ազգասէր Մէլիք-Փարսադանը, անպարտելի Մխիթարը և դիւցաղնական Տէր-Աւետիքը։ Եւ երբ որ Դաւիթ-Բէգը վախճանեցաւ իւր ծերութեամբ, նորա տեղ ընտրուեցաւ քաջ և արի Մխիթար զօրապետը, որ քանի տարի տիրեց։

‘Ա, աղիր-Շահի ժամանակը, որ տեսեց 1722 էն մինչև 1744, ‘Ղարաբաղի մէլիքները աւելի հաստատութիւն և արտօնութիւններ գտան և նոցա իշխանութիւնը որդւոց յորդիս տեսեց մինչև այնժամանակ, երբ որ այն մէլիքների վերջինքը Սանահնեցի Արդութեան Յովսէփ արքեսպիսկոպոսի բանագնացութեամբ և գործակցութեամբ ընդունեցին Եկատարինեայ Ռուսաց ԲԿայսերուհւոյ հպատակութիւնը, որ ժամանակ որ Ավան-Խան իշխանն-էլ Աւտէացւոց երկրէն գաղթեցաւ Հաշտարխան։ Աւրեմն Հայերը այնժամանակն-էլ, երբ որ Շահ-Արքասի հրամանաւզո՞չ էին դառնում հուրի, սուրի և ջուրի՝ կարող էին իրանց պաշտպանել, ինչպէս որ ամեն ժամանակ էլ, երբ որ կամեցել են՝ կարողացել են։



ՆՈՐ ՆԱԽԻՉԵՎԱՆԱՅ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆ

Ե Ւ

ՏԱԿԻՐԿԵՍՆ ՀԱՅԵՐԸ

Слово о полку Игореве

44

Слово о полку Игореве

ՆՈՐ ՆԱԽԵՏՃԵՏԱՆԱՑ ՀՏՈՒՄՐԿՈՒԹՈՒՆ

ՏԱՐԻԿԵԱՆ ՀԱՅԵՐԸ

**Ա**յսաստանի ալէկոծոթեան ժամանակը, երբ  
որ Հայոց ազգը մեծ մեծ բաղմանիւննե-  
րով զուրս էր գալիս իրա Հայրենիքն և օտար աշ-  
խարհների մէջ էր պլառառում ու գտնում իրա Հա-  
մար Հանգիստ ընակելու տեղ, Հետեւելով նախնեաց  
տիսմար առածին, թէ „Յիմարք զՀայրենիս խնդրեն  
և իմաստոնք զՀանգիստ“, Հին դարերէ սկսած՝ շատ  
Հայեր ընակուել էին Խրիմի մէջ, որ Տաւրիկեան թե-  
րակղզի ևս կոչվումէ:

Այս բարելի երկերը ծանօթ էր Հայերին Փրիստոսի աշխարք զալէն շատ առաջ, զեռ ևս Արշկունեաց թագաւորութեան հզօր ժամանակը, երբ որ

Արարատեան զօրքը և Ասրանաղեան գնդերը Միհրդատի զօրաց հետ զինակից լինելով՝ իրանց բազկի ահն ու դողը տարածումէին այն տեղերումը, ուր որ Եւրոպա և Ասիա մօտենում են մէկզմէկու՝ Աև ծովի և Միստիս ծովակի (Աղախի կամ Աղովեան ծովի) խառնուած նեղուցումը :

Խնչալէս երեւումէ, եղել է այնպիսի ժամանակ, որ այս նեղուցը դեռ ևս չէ եղել. Ահ ծովը և Միստիս ծովակը մէկզմէկէ բաժան էին. Տաւրիկեան երկիրը և Թամանը մէկմէկու հետ կից էին. Նեղուցի տեղումը եղել է կիրճ, որ այժմ (թերես) աղաւաղեալ անունով Կերչ է ասվում:

Հայաստանի բնակիչք և Միհրդատի երկիրների աղդերը, բացի ծովային ձանապարհներէն, այս կիրճով ևս ցամաքային հաղորդակցութիւն են ունեցել մէկ մէկու հետ: Արապատ, որի միայն աւերակը կայ այժմ, Հայի յիշատակարանի նման է: Դեռ ևս Վաղարշակ Ա օրերումը (թողունք մեծին Տիգրանայ աշխարհակալութիւնը) Հայաստանի ծայրը հասած էր մինչև այժմեան ջոռնամօնի երկիրներին. ոչինչ երկրայելի չէ, որ և Թամանը Հայոց քաղաք լինի եղած: Վաղարշակի որդի Արշակ Ա ևս առաւել ամրացուց այն տեղերումը Հայոց տէրութիւնը, մինչև նորա որդի Արտաշէս Ա իւր դուստրը, Արտաշամայ դշխոն, Միհրդատին հարսնացնելով՝ տուեց նորան Վարդը բդեշխութիւնը և նրամով հիմք գրեց Պոնտոսի թագաւորութեան, որոյ մէջ էր և Տաւրիկեան թերակղզին:

Օ արմանք չէ, որ Հայերը վստահութեամբ, ինչպէս իրանց համար ծանօթ երկիր, Հայաստանէն եկա՞լ են այս աշխարհը, նախ որ՝ Հայերը քան զայն աւելի հեռու երկիրներ-էլ են տարել իրանց գտղթականու-

թիւնը և երկրորդ որ՝ Տաւրիգա խորին հնութենէ  
սկսած՝ եղել է գաղթականների տպաստանին Դեռ ևս  
Յունաց դիւցազների ժամանակը Ագամեմնոնի դուստր  
Իֆիգենիան այստեղ գտաւ իւր անձին դադար վտա-  
րանդութենէ՝ Անահիղ չաստուածուհւոյ մեծագանձ  
տաճարի մէջ քրմուհի կարգուելով և պանդոխտ օ-  
տարականներին զոհ անել օրինադրելով, որով Տաւ-  
րիգայի անունը մնաց «անհիւրբնկալ» : Այս տաճարը  
կողոսպտելու մտքով էին եկել երկու Յոյն քաջարիք՝  
Իֆիգենիաի եղբայր Օրէստը և նորա ընկեր Պիլատը,  
որոց անունները աննախանձ բարեկամութեան և մտեր-  
մութեան օրինակ են դարձել աշխարհի երեսին: Այն  
անահտական տաճարի տեղումն է, տում են, այժմ-  
եան Ս. Գէորգեայ եկեղեցին Յունաց՝ Պալքալավյումը:  
Բայց ոյն անհիւրբնկալութիւնը չըկարաց արգելք լի-  
նիլ, որ Յունաց գաղթականները չըտարածուէին Տու-  
րիկումը: Սարմատացոց ժամանակը, նորանց ձեռքէն  
առաւ այս երկիրը Միջրդատ: Նորամէն խլեցին Հոռ-  
մայեցիք: Սրանցմէն մնաց ժառանգութիւն Բիւզանտ-  
եան կայսերութեան, և որամով յատնուեցաւ որ՝ ան-  
հիւրբնկալ անունը տպատահար էր դրուած Տաւ-  
րիգային, և նորա ծովափնեայ քաղաքները շատ յար-  
մարութիւն ունենալով առևտրական պործերի Աև,  
Միջերկրեայ և Միստիս ծովերի շրջակայ ազգերի  
հետ՝ Հայոց վաճառքաշահ աղզի հւմար, վաղնջուց  
ժամանակներէ սկսած, դարձել էին հիւրբնկալ և  
հայրենիք:

լով այն դարերը, որոնց վրայ դեռ ևս պատմական  
խուզարկութիւնը չէ սփռել իւր լուսոյ շողերը, գանք  
այն դարուն, երբ որ Գէնուայիք տարածեցին իրանց  
առուտուրը և իրանց աշխարհակալութիւնը հին կի-  
սաղնդի հեռաւոր տեղերումը:

Այս Խոալացի ազգը, որ Գէնուա քաղաքէն դո-  
յացուց և կազմակերպեց մեկ այնպիսի Հասարակու-  
թեառութիւն և այնպիսի Համաշխարհական վաճառա-  
կանութիւն, որի նմանը տեսած չէր աշխարք ոչ Տիո-  
րոսէն և ոչ Կարկեղոնէն, երբ որ երկոտասաներորդ  
դարումը եկաւ տիրապետեց Տաւրիդային՝ այնոեղ  
դտաւ վաճառական Հայերի մեջ քաղմութիւն։ Կա-  
ֆա քաղաքը (որ Յունաց տէրութեան տակ կոչուել է  
Թէոդոսիա, իսկ Տաճկաց ձեռին յետ ժամանակ աս-  
մեցաւ Գէֆէ) ունէր իւր մեջ մինչև Հարիւր Հազար  
բնակիչ Հայ։ Երեքտասան և չորեքտասաներորդ դա-  
րերումը այս քաղմութիւնը ևս առաւել աճեցաւ,  
նախ՝ երբ որ Սարայ քաղաքէն (Հին-Հաշտարխանէն)  
Հայերը Թաթար ազգէն նեղանալով նրանց դէմ թուր  
Հանեցին և մեծ ամբոխներով վիսխաղրուեցան և ե-  
կան Տաւրիդա, և երկրորդ՝ երբ որ Լանկթամորի  
դէնքը ջարդուփշուր արաւ ոսկեզէն Օրդուի թագա-  
ւորութիւնը։

Հայերի բնակութիւնը, քայի Կաֆաէն, Էին Սու-  
ռադ կամ Կազարաթ և ամեն ծովափնեայ քաղաքները՝  
Սելաստասլու (Ախեար), Ելուտօրիա (Կէօղլէլի). Իսկ  
թէրակղու միջերկերեայ տեղերումը բնակուել էին  
այն քաղաքների մեջ, որոնք որ Տաճկաց կամ Թա-  
թարի ժամանակը, երբ որ Տաւրիդան Խրիստ կոչուե-  
ցաւ, ասուեցան Վարասո-Քաղաք, Ախմեջիթ (Սիմ-  
ֆերապոլ), Էսկի-Խրիմ, Պահէստարաց, Օրբաղար,  
Չալթըր, Հորդալանք, Նիսակիթա, Մեծ-Սալտ, Առւ-

թան-Սալտ և շատ քաղաքներու ու գեղեր իրանք նորէն հիմնեցին և նրանց անունը դրին Հայտառանի անուններէն, որոնցմէն քանի Հատը ասուեցան Նախիջևան և Նախչուան։ Հայերի բազմութիւնը և նոցա առուտուրը ոտքի կանգնեցուցին Տաւրիկեան Երկիրի վաճառաշահութեան դործոնէութիւնը և այս թերակղզին, որ Բիւզանտեան բռնութեան տակ մէկ ազգատ խորշիկի էր նմանում՝ անսովոր և անտեկալ յառաջաղիմութիւն ստանալով՝ հարստացաւ և դարձաւ միմերանոց Եւրոպական Ճոխութեանց։

Հայոց ազգը այնքան շատ էր այս Երկրումը, որ նոյտ Երկեղեցական վարչութեան Համար Երկու առաջնորդութիւն սահմանուեցան։ Կաֆաի առաջնորդի իշխանութեան տակն էր և Թրակիոյ վիճակը։ Հազարէն աւելի եկեղեցիներ ունեին Հայերը։ Յակոբոյ Խրիմեցոյ ազգահամար Ճիւղաղը թիւնը ընդունված է, կանոնագրի լրութեան մէջ։

Տաւրիկեան Երկրի վաճառական Հայերը իրանց առուտուրի սկատձառաւ՝ սկսան Հայազգի դործակատարներ սկահէլ Գալիցիաի, Մածառատանի, Թրանսիլվանիաի, Մոլդավաի, Վալաքիաի, Բուքովինա՛ի Կիժուաի, Պոգոլիաի և Բաննաթի մէջ և այսուեղէն սկսաւ Հայոց ազգի այն Երկիրներումը շատանալը, որոց աւելի բազմամարդ բնակութիւններն էին Չեռնովիցա, Կամենիցա, Ստանիսլավով, Կեմբէրգ կոմ Իւգով և Վարշավ։ Այս քաղաքները Տաւրիկեան Հայերի շինցուցած և Հայազգի բնակիչներով լրցրած են, որով իսկ Տաւրիկեան Հայերը նոցա նախնիք պիտի համարուին։

\* ) Ինչպէս որ Ա. Փրկչավանքի եկեղեցւոյ գմբէթի մէջի կողմէն բուռ-ը սծիր գրուած է դրուականն զբով Հայերէն ուանաւը յիշատակարան։

Հայերը նոյն յաջողութիւնը և նոյն յառաջադիմութիւնը ունէին թէ՝ առուտուրի և թէ այլ քաղաքական գործերի մէջ և այն ժամանակ, երբ որ Վենետիկեցիք եկան և Գենովացիների ձեռքէն առին Տաւրիդան։ Բայց Վենետիկի վերջին Հիւալատոսի անրդգումութիւնները ստիպեցին Հայերին՝ հրաւիրել Տաճկաց և նրանց անձնատուր լինել։ Առկայն երբ որ մահմետականը տիրապետեցին այս երկրին և անունը դրին «Ղոխ» կամ «Փորլի-Աղօսի»՝ Հայերի մէջին շատ իշխանաւորք իրանց բարեացակամութեան փոխադարձ ստացան այն, որ զոհ գնացին նոցա բարբարոսական արծաթասիրութեանը։ Այս պատճառաւ Հայերը վախենալով այնուհետև նոցա մոլեռանդ անօրէնութենէն՝ սկսան օր ըստ օրէ ցրուիլ։ Բայց դեռ ևս շատ Հայազդի երեւելի դերդաստաններ կային Տաւրիկեան քաղաքների մէջ և մէջ բազմութիւն Հայոց գտնովուր էր ծովափնետյ տեղերումը և նոցա լայնածառալ առուտուրը պատճառ էր տալիս Տաճկաց՝ Քեֆէ քաղաքը երկրորդ Ստամբուլ անուաննելու, իսկ Եւրոպացոց՝ Լրամենա մարիտիմա այսինքն՝ Ծովային Հայաստան։

3

Այսպէս ծաղկեալ վիճակի մէջ էր Տաւրիկեան երկիրը Թաթար-Խանի իշխանաւութեան տակ, երբ որ Եկատերինա Բ Ռուսաց Կայսերուհւոյ յաղթակիր զօրքը մտաւ Տաւրիդա։ Այս զօրաց ընդհանուր հրամանատար և սպարապետ էր բարեբաստիկ իշխան Պօտեօմկին, մականուանեալն Տաւրիկեան, որին ուղեկից և հաճոյաբար անձնանուէր սպաշտոնեայ էր Ռուսաստանի Հայոց առաջնորդ Սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ-Արղութեան։ Պօտեօմկին կամենումէր Սև ծովի շրջակայ դաշտավայրումը հիմ-

Նել նոր Ռուսաստանի գաւառը և մեծ սէր ունենալով նոր քաղաքներ շինելու՝ արդէն սլատրաստել էր Փերսոնի, Եկատերինոսլավի և Նիկոլայեվի ձեագրութիւնը և սկսել էր նորանց հիմնարկութիւնը։ Յովսէփ արքեպիսկոպոսը, հասկանալով նորա քաղաքաշինութեան սէրը՝ կամեցաւ իւր գլուխը ցոյց տալ նորա իդէաներուն ջերմեռանդ և անձնադիր գործակից, մտքումը դրեց Տաւրիդու Հայերէն գաղթական դուրս բերել, նոր քաղաք շինել, որ Պօտեօմկինի շինած քաղաքների թիւը աւելանաց և ինքը ասուի հիմնադիր այս ինչ և այն ինչ քաղաքի։ Ճոռոմարան կարդաւոր, որոյ առջելն էր զնում աւագավող հրեշտակի նման «ազգասէր» անունը, գտաւ իւր գաղափարներին ձեռնուու և օգնական Տաւրիդու բնակիչ Հայերի մեջէն շատ հոգևորական և աշխարհական անձինք, որք սկսան Հայերի մեջ քարոզել թէ, „Կաւ կը լինի, եթէ մենք խնդրենք Հայոց արքեպիսկոպոսի միջնորդութեամբ Ռուսաց Սպարապետին, որ նա մեզ Տաւրիդայէն Ռուսաց տէրութիւն գաղթեցնէ։“ Տաւրիդոյ երկիրը արդէն Ռուսաց տէրութիւն էր, և ով որ կամենար խորին Ռուսաստան երթալ և բնակուիլ նորա համար բաց էր գուոր. Աստրախան, Վալար, Մողդոկ, Մասկուա, Պետերբուրգ հայարնակ քաղաքներ էին Ռուսաստանի մեջ, մեկ տեղէ միւս անդ երթալու համար՝ ի՞նչ հարկաւոր էր Սպարապետին խնդրել և արքեպիսկոպոսին միջնորդ բռնել։ Ով ուր կամենար՝ կարող էր երթալ. չըկամեցողներին ի՞նչ հարկաւոր էր տեղերէն շարժեցնել։

Աերմանեցին խեղճ Հայերի մեջ մէկ նոր հոգս և աւելի աղջու դրդելու համար՝ համբաւեցին, թէ Ռուսաց զօրքը մնալու չէ Տաւրիդայումը և Տաւրիդան Ռուսաց իշխանութեան տակ պահելու չէ, այլ ալի.

տի դարձեալ Թաթարներին յանձնեն և իրանք Ռուսաստան դառնան :

Աթէ իրաւ այսպէս-էլ լիներ (որ անհնարին էր) այսինքն՝ Ռուսաց զօրքը թողներ Տաւրիկեան երկերը և վերադառնար Ռուսաստան՝ Հայերը ի՞նչ երկիրդ ունեին, ո՞չ ապաքէն առաջ-էլ Թաթարի ձեռի տակն էին, էլի այնպէս պիտի մնային: Ու Հայերի մէջէն ոմանք (և ոչ ամեն Տաւրիկոյ բնակիչ Հայկազունք) վախենալու տեղ ունեին. ուրա կարող էին գաղթել Ռուսաստան, եթէ իրաւ Ռուսաց զօրքը կամենար Տաւրիկան թողնել Թաթարների իշխանութեան տակ, իսկ մուս Հայերը կարող էին մնալ:

Ռուսաց զօրքը Տաւրիկեան երկերները մտնելու ժամանակ, անհնար էր, թէ Հայոց ազգէն ջերմեռանդ ծառայութիւն չըտեսներ և քրիստոնէավայել օդնութիւն չըդաներ, մանաւանդ երբ որ իրանց Տաւարիմ Յովսէփ արքեպիսկոպոսի նման մարդ այն զօրքին ողեկից էր և Հայերը դեռ ևս մոռացած չէին այն անդթութիւնը, ինչ որ տրել էին Տաճիկները, երբ որ Հայերի օդնութեամբ տէր եղան Տաւրիկեան երկերին: Յովսէփ արքեպիսկոպոսի աղղեցութիւնը, թէ անձնովին և թէ գործակատարների սատարութեամբ, շարժելով հին յիշատակները՝ շինել էր շատ Հայազդի Տաւրիկեցոցմ, սլատրաստական և քոջայարմար միջոց, որով Թաթարների ամեն որողացթները յայտնվում էին, Ռուսաց դբնքը յաղթանակում էր, Օրի անառիկ կարծուած դուռը սլատերազմի երկաթի բանալիով բացուեցաւ և բոլոր թերակղզում մէջ ընդունուեցաւ Ռուսաց ցանկալի Հովանաւորութիւնը: Այն Հայերը իրանց մտերմութեան և օրտեսանդ աշխատութեան վոխարէն, Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ, ՚ի Տարկէ, մեծ մեծ պար-

դեներ ևս ստացել էին Ռուսաց երախտագէտ տէրութինէն : Այս մարդիկը իրաւացի պատճառ ունէին վախենալու, որ եթէ Ռուսաց զօրքը արդարի Խրիմը թողներ և Ռուսաստան յետ դառնար՝ նորա Փաթարի ձեռքէն պիտի մեծ մեծ միասներ սպասէին :

Աչա այս մարդիկը կարող էին և հարկ ևս ունէին տեղաշարժ լինելու :

4

Յովսէփ արքեպիսկոպիսի Համախոչ մարդիկը կամ զիտէին նորա խորհուրդը, կամ ոչ, որ Պոտուելիինի դիտաւորութիւնները առաջ տանելու Համար՝ կամենում է Հայոց ազգի հաստատոն բնակութիւնը քանդել, փոխանակ Հասկացնելու, նորան թէ՝ մենք էինք միայն աշխատողը և վարձ առնողը և մենք յօժար ենք քեզ Հետ երթով, որ և կտմիս, միայն ողորմելի Հայերին ձեռնամոխ մի լինիր, դարասոր ժամանակներով ամբացուծ կեցութիւնները մի դրադուեր, սկսան ժողովրդեան մէջ Յովսէփ առքեղիսկուպոսէն լսած այն Ռուսաց Խրիմը թողնելու և Ռուսաստան յետ դառնալու լուրը արծարծել, Հանդերձ զանազան Տնարիմաց յաւելուածներով, թէ Փաթարները ստարաստուել են Հայերին կողոսկան և ուռք քաշել : Խրիմու Հայերի մէջէն շատ մարդ Հասկանումէր այս Համբաւների անհիմն և խորառ սուալինելը և չէր խարիւմ :

Սոցա գլխաւորն էր Խրիմու Հայոց այնժամանակի սուաջնորդ Պետրոս վարդապետ Վարկոսեանը, որ շրջանկատ, ազգասէր և փորձառու մարդ լինելով և Փաթարների մեծամեծաց տաջեւ սրատուելի և պատկանելի՝ իմանում էր այն լուրերի ունայնութիւնը և

Հայերի սրտէն այն տարապարտ երկիւղի մէզը փո-  
րատելով՝ զգուշացնում էր իւր ժողովողեան, որ չընկ-  
նին համազդի խարերաների որոգայթի մէջ։

Այս կերպով Տաւրիկեան Հայերի մէջ ընկաւ երկ-  
պառակութիւն, որ նոցա բաժանեց երկու բանակ. մէկ  
բանակը, որն որ Թաթարներէն վախենալու պատճառ  
ունէր և Թուսաց տէրութենէն պարզեներ էր ստա-  
ցել և այլ ևս շատ սղորմութիւններ և շնորհներ  
ստանալու յոյս ունէր՝ հաւաքուեցաւ արքեպիսկոպոսի  
դրօշակի տակը. իսկ միւս Հայերը, որոնք իրանց վի-  
ճակէն դոչ էին և ստուգիւ տեղեկացել էին, որ Խրիմ  
միւսանգամ մահմետականաց ձեռք ընկնելու չէ և  
Թուսաց զօրքը այնտեղէն հեռանալու չէ և Թաթար-  
ները ոչ եթէ Հայերին կողոսկաելու և սուրէ անցնելու  
դիտաւորութիւն ունենալու չեն կարող յանդպնիլ,  
այլ և իրանց առաջուան արածներին վրայ սաստիկ  
զղջումն ունենալով, (որովհետեւ յայտնի տեսան, թէ  
որքան վեստ ունեցաւ Հայոց ատելութիւնը և որքան  
շահ պիտի ունենար նոցա սէրն ու բարեկամութիւնը)  
ամեն կերպով ջանք էին անում նոցա սիրոը շահել,  
որ ապագային ևս աէւոք գան և ներկայ ժոմանակին  
ևս իրանց գլուխը Թուսաց սուրէն սլահանելու հա-  
մար՝ Հայերին իրանց առաջև վահանի նման էին պա-  
հում, հաւաքուեցան իրանց քաջ և բարի և անձնա-  
դիր հովիւի չորս կողմը, որ նորանց միշտ խրախու-  
սում էր հանդարտ նստիլ, չերթալ, չըմոլորուիլ ա-  
նապատների մէջ և գայլերի կերակուր չըդառնալ,  
Թուսաց տէրութեան շնորհը վայելել այն երկրումը,  
ուր բղխէ զկաթն և զմեղը, և նախանձարեկ շան նման  
ստուերէն չըխարուիլ և հանդերձեալ կեղակարծ բար-  
եաց յուսով՝ ունեցածներէն չըզրկուիլ և հացը բեր-  
ներէն ջորը չըձգել։

Ապարապետը խմանալով Տուրիկեան Հայերի կէս բաժնի ցանկութիւնը, որ կամենում է Յովսէփի աշքեալիսկոպոսի Խորհրդին հնազանդիլ, որ իւր ղիտաւորութեան համաձայն էր, յանձնեց Կոմս Ռազումովսկի զօրապետին այն գաղթականութեան տնօրէնութիւնը։ Առ սկսաւ հոգւով չափ օդնել Յովսէփի արքեպիսկոպոսին, որ նա իւր Խորհուրդը կարողանայ դլուխ հանել։

Յովսէփի արքեպիսկոպոսնել գտաւ այնպիսի մարդիկ, որոնք կարողացան նորա առջև ամեն ձոր լցնել և ամեն առապար փոխել՝ ի հարթա ճանապարհաց, Եկեղեցականք և աշխարհականք ստանում էին մեծ մեծ վարձատրութիւններ։ Թագաւորութիւն էր կործանուել, նորա առարը շատ մարդու էր բաւական, Կախիջևան Ս. Թէոդորոս Եկեղեցու մէջ Երկար ժամանակ քահանայութիւն արաւ մէկ Տէր-Թաղէոս, որի հայրը, Տէր-Յակոբը, միայն իւր աշխատութեան փոխարէն ստացաւ մէկ փարախ ոչխար……

Հայոց մէջէն շատերը, որոնք որ կամ եկեղեցեաց մէջ Երեսփոխաններ էին, կամ զանձապետ, կամ հոգաբարձու, կամ Թաթարների աւանդապահ, կամ արքայական դրան արծաթփոխատու, կամ մրդանների սեղանաւոր, կամ սնանկութեան մօտեցած վաճառական և այլք՝ թողին իրանց հաստատոն Խորհուրդը, որ Վրիմէն պիտի դուրս ըստային, և միաւորուեցան Յովսէփի արքեպիսկոպոսի հօտ, Երբ որ Պետրոս վարդապետը իւր ազգասիրութեան զոհ գնաց և իւր անձը դրեց իւր ոչխարների վրայ։

Հայերը մնացին անդլոխ և անառաջնորդ, և Յովսէփի արքեպիսկոպոսը հրատակուեցաւ Վրիմու Հայերին ևս առաջնորդ և ժառանգեց Պետրոս վարդապետի առաջնորդութիւնը և վիճակը, որ քանդուելու

մօտ էր հասել, և Հայերի հզօր մասը իւր օդուտը նշմարեց Յովսէփի կամքի հնագանդուելու մէջ,

Այնժամանակ մէջերէն մարդիկ ընտրեցին և 1777 թուին պատգամաւոր (դէսպոտատ) ուղարկեցին Ելատերինա Կայսերուհւոյ դուռը։ Այս առաջին պատգամաւորները մեծամեծ ալէկոծութեան հանդիսելով՝ նոցա ետևէն դնացին երկրորդ անգամ ուղարկած պատգամաւորները։

Այս երկրորդ անգամ դնացած պատգամաւորների մէջ կային Կարապետ-աղա Ախոսաշեան և Պօղոս-աղա Յարութիւնեան խալուպեան։

## 5

Վրիմու Հայոց ուղարկած պատգամաւորութիւնը անցածողակ ելք ունեցաւ, որովհետեւ Հայերը, որ ակամոյ էին միաբանուել Յովսէփ արքեսլիսկոպոսի համախոհների կամքին՝ չէին կամենում, որ Կայսերուհու դրան առազորերու հետ խօսակցութեան ժամանակը նա լինի միջնորդ կամ թարդման, այլ իրանք ուղղակի, առանց միջնորդի իրանց պատգամաւորների բերանով կարողանան խուսաց Կայսերուհւոյ առջետարածել իրանց աղերսը, որ իրանց ցաւը յայտնեն և իրանց պիտոյից համեմատ արտօնութիւն խնդրեն։ Այս պատճառաւ պատգամաւորներին ես ուղարկել էին արտաքոյ նորա խորհրդեան և ընտրութեան և ընդդէմնորա կամաց, և նոցա էին յանձնել աղքի վիճակը, որ մնացել էր սաստիկ վոթորիկների հողմակոծութեան մէջ։

Առա վոխաղարձ նեղումնվոկիի համախոհների սատարութեամբ մայրաքաղաքի մէջ շտա անձինք կամենալով Յովսէփ արքեսլիսկոպոսին դնել անշուշտ

Հարկաւոր անձն դաղթականութեան դործի մէջ, խոչընդակութիւն էին ցոյց տալիս սկատգամաւորների աչքին և նոյն օինակ սուտ համբաւներով վախեցրնումէին թէ՝ եթէ ազգացին դործի մէջ չոխառնուի ձեր առաջնորդ Յովսէփի արքեսլիսկոպոսը՝ ձեզ Վրեմին բռնութեամբ կըհանեն ու դերիների սկս Ռուսաստանի մէջ կցրուին, իւրաքանչիւր մեծաղդի Ռուսերին մէկ քանի հայ գերդաստան ճորտ անելով և բաժնելով։

Տեսան ողորմելի Հայերը, որ կացնի կոթը իրանց մէջէն է, տեսան որ Ռուսաց տէրութեան դուռը դեռ ևս դոցա հսկատակութիւնը չըտեսած՝ պիտի դորանց տարաձայնութեան անհամութենէն ձանձրանայ, տեսան որ ազգաւեր մարդիկ սկատրաստ են իրանց կտորը տեղ հասցնելու համար՝ Կայսերուհոյ բարեհաճութիւնն-էլ նրանցմէն խախանել, տեսան որ Ռուսաց տէրութեան հովանաւորութիւնը, որ շատ ազգեր վայելում են՝ նորամէն իրանց գլխաւորները սկիտի հեռացնեն, տեսան որ իրանց ցանկութեան և ակնկալութեան հակառակ՝ Ռուսաց Կայսերուհու բարեացակամութիւնը պիտի բարկութիւն փոխարկեն՝ Հարկադրուեյան հնազանդուիլ անհրաժեշտ Հարկաւորութեան, և աչքերը լիքը դառն արտասուօք՝ Հասարակաց օգուտը զոհեցին այն անողոք Հարկին, որի մերժելը և իրանցմէն հեռացնելը դեռ ևս չըգիտէին, թէ կայ հնար, և խնդրեցին Յովսէփի արքեսլիսկոպոսէն, որ օդնէ.....

Այնժամանակ Յովսէփի արքեսլիսկոպոսն-էլ տեսնելով՝ որ Պատեօմիլինի վառասիրութեան գաղափարը պիտի մարմնանայ՝ նորա յանձնարարական թղթերով փութացաւ Ռուսաստանի մայրաքաղաք, և այս կերպով Խրիմու Հայերը Կայսերուհոյ շնորհէն ստուցան 1779-

թուին ամենողորմ պարզեստիրը, որով (որովէս թէ Հայերի ընտրութեամբ հաւնած տեղի վրայ) հրաման էր շնորհել՝ շինել Նոր-Նախիջևան քաղաքը։ Այս սուտ չէր. Յովսէփ արքեպիսկոպոսի համամիտ Հայերը առաջնորդի սագրութեամբ իրանց մէջէն մարդիկ էին ուղարկել Ռուսաստան տեղ որոնելու։ Սոքա եկել էին և Դիոնաւիս (Դօն) գետի ափերումը մէկ տեղ էին տեսել ու հաւնել և գրել էին իրանց պատղամաւորներին և նորա այն տեղն էին խնդրել։

Օ արմանք է. Հայերին այնժամանակները շատ տեղեր էին տալիս, Թագանրոգ քաղաքը, Թօսովով քաղաքի տեղը, և այլ տեղեր, բայց Հայերը չեն կամեցել ընդունել, այլ ընտրել են յիշեալ Դանաւիս գետի հիւսիսային եղթումը Պոլուղեննիք կղզին և նորա առջեր մէկ անշէն ամայի բլուր<sup>\*</sup>)։

Հայերին պարզեած էր Դիոնաւիս գետի մէկ մասը՝ ձկնորսութեան համար՝ Դօնսկոյ զաղախների մասնէն կտրած և հարաւային կողմի դաշտերէն ութւուն ու եօթն հաղար արտաշափ երկիք՝ Նիսվիթա, Վալա և Սամբէկ վտակների միջոցը։

## 6

Հայերի դաղթականութեան դործը երկարակութեան, ակամայութեան և շատերի հետապնդութեան պատճառներով յապաղում էր, յամաղում էր և ըով-

\*) Այս բլրի արևելեան կողմանն է Ծխսայի-Դէրէ (Խըզ-Դէրէսի) ասացեալ ձորը, որ նախնեաց առաջութեամբ Ծմազնեաց ազդի սահմանն է, իսկ արեմուեան կողմը՝ Դիմիարի Թօսուով յու Ա. Խաչ՝ Սուվորով զօրապիտի շինած բերդն է, և թեմէրնիկ կարծեալ Թէրմէդոն՝ Ծմազնեաց միւս սահմանի վառեկը։

ոէփ արքետիսկոպոսի խորհուրդը, յասլաղում էր և  
Պատեօմիլինի քաղաքաշնութեան ցանկութիւնը։ Հար-  
կաւոր էր խթան։ Գորա ևս պոկտութիւնը չկար։  
Տարածուեցաւ ոռւտ համբաւ, թէ Թաթարները պիտի  
նշկահեն Ռուսաց և նոցա վրեժինդրութեան զոհ  
պիտի երթան Հայերը, որովհետեւ Ռուսաց անձնա-  
տուր են եղել և նոցա օգնութիւն ու բարեկամու-  
թիւն են ցոյց տուել։ Միւս կողմէն ևս սկսան ա-  
սել թէ՝ Ռուսերը տեսնելով որ Հայերը խարել են  
տէրութեան, խնդրել են, որ իրանց հալատակու-  
թիւնը ընդունեն և այժմ չեն կամենում փութալ ի-  
րանց ուխոր կոտարել։ Իրանց գուրու պալու ժամա-  
նակը պիտի իրանք բռնադատեն, ընդդիմացողներին  
կոտորեն, նոցա ստացուածքը և զաւակները անուն  
և միւսներին քշեն տանեն Ռուսաստան։

Յատթարների մեջ ոչ ոյժ կար և ոչ կար՝ Ռու-  
սաց նշկահելու. թաթար-խանը լաւ էր ճանաչել Ռու-  
սաց զօրութիւնը թէ իւր թէ Տաճկի կնատութիւնը.  
Թաթարը իրա պլուիը թարցնելու տեղ էր սլորր-  
տում։ Գտան խարերաները մեկ քանի հատ տկլոր  
մրզաներ, հարբեցրին, ձի նստեցրին և Հայերին ա-  
սացին թէ՝ մեծ շփոթ կայ։

Դիշերը՝ մութը տեղ դաշտումը ման եկողի աչ-  
քին խոտերը, ցախերը և թուփերը հեռուից մարդ  
կրկործուին։

Յովսէփ արքետիսկոպոսը իրան Առվուէս մարդարէ  
ձեացուց, Կրիմը՝ Եղիպտոս, Հայերին՝ Խարայէլացւոց  
աղդ, Թոթարներին՝ Եղիպտացիք, գինովցած մրզա-  
ների խաժամուժը՝ Փարաւոնի զօրք, որ Խարայէլացւոց  
ելքը Եղիպտուեն պիտի խավանէր։

Լաւ էին իմանում խեղձ Հայերն այս խեղկատա-  
կութիւնը և յայտնի տեսնումէին, որ ոչ Ռուսերն են

իրանց քաշիքաշ տանում և ոչ Թաթարներն են հալածում, այլ Յովսէփ աբքեսկիոպոսի վառասիրութիւնն է քարուքանդ անում. բայց բան ասելու չէին համարձակում. զօրեղ էր կղերական կողմնասիրութիւնը. ծածուկ լոց էին լինում, բայց երբ գալիս էին նորա առջև „Ծառայ եւ՛ սրբութեանը”, իհարկէ, Արխմեն դուրս գալ պէտք է՛ էին ասում:

Արոնք որ հոգւով մարմնով յարած էին Յովսէփի արհւոյ խորհրդին՝ նորա ստացել էին գանձարանէն, Բիազումովուկու տնօրէնութեամբ, զրամ, սայլ, ձի և գաղթականութեան համար ամեն հարկաւոր բաները. Սրա իրանց բանը միայն ուղղելով և այլոց ոտք զարնել կամենալով (որովհետեւ տէրութեան տուած օգնութիւնը սրանց էր յանձնած ժողովրդեան մէջ քաշխելու), սուս համբաւ էին տարածել թէ՝ Ով որ Բիուսաց տէրութեան օգնութիւնը ստանայ, նա պիտի կամ Բիուսաց մեծամեծաց ձորտ դառնայ՝ կամ զինուոր գրուի:

Կյա լուրերէն լերդապատառ խրանելով շատերը իրանց յետին բնիոնը վատնում էին, որ Բիուսաց Տէրութեան շնորհած օգնութիւնը չ'ընդունեն: Այսպիսի որոգայթներով ողորմելիքը շրջապատած լինելով խարուած, անպատճառ մնալով մինչև մէջերէն շտերը բնաւ կամք չ'ունէին դուրս գալ. իսկ միւսները դեռ ևս դանդաղում էին՝ յանկարծ տեսան Թաթարների խլըտիւնը:

Խարերաները ասացին որ „Ահա սկսեց ապստամբութիւնը”, Միամիտները կարծեցին, թէ այս պատերազմի խոռվութեան շվոթի երկունքն է, բայց այն միայն հարբած մրգաների աղուաւաժողովի խրտուիլակներն էին: Միամիտ Հայերը ընկան արհաւիրքի մէջ, և ըսկարծելով թէ հնարագէտների խարէու-

թիւնն է՝ սկսան գիշերը ցերեկի խառնել, որ դուք  
դան և աղատուին։ Սոքա ամենքը մեկ տեղէ կամ մեկ  
քաղաքէ դուքս գալու չէին, այլ ոմանք պիտի դուքս  
գային Քէֆէին, ոմանք Խարասուբազարէն, ոմանք  
Սուղաղէն, ոմանք Կէզղէվէին, ոմանք Ախեարէն, ո-  
մանք Ախմէջիթէն, ոմանք Էսկի-Նրիմէն։ Սոցա ժո-  
ղովուելու տեղը ո՞րը պիտի լինէր յայտնի չէր. որով-  
հետեւ ոմանք պիտի Օրի դրնէն ճանփայ ելանէին,  
ոմանք-էլ Արակատէն անցնելով Ճինիչիկի (Գէնիչի)  
նեղ ցամնքալեզուէն պանդխտէին։

Վենին չէր հասնում գրաստ կամ սայլ, Շատերը  
իրանց ունեցած շունեցածը թաղեցին, թողին ջրհոր-  
ների ու գետնափոր մառանների մէջ և այնպէս դա-  
տարկաձեռն ճանփայ ընկան։ Ի՞նչ սուգ, ի՞նչ ողո, ի՞նչ  
արտաստնը էր նոցա մէջ, երբ որ իրանց տունը,  
աեղը, ջրալաշըները, սլարտէղները, այդիները, Հիւ-  
րանոցները, ագարակները և սյլ մեծ կամ վոքր կտ-  
լուածները կամ թողնում էին անտէր, այն յուսով,  
որ յետոյ գային ու տէրութիւն անէին, կամ չնչին  
դնով վաճառում էին Հրէից, Ռուսաց և Թաթար աղ-  
դին։ Ո՞րքան հարուստ տանտաէրներ տկլորուեցան,  
ո՞րքան տկլոր մերկոլոգներ հարստացան։ Մէկը իւր  
տանը կպղակ էր դնում արտասուօք և սլահապան  
Հրեշտակին էր յանձնում նորա ապահովութիւնը,  
միւսը գալիս էր նորա աչքի առջեր ծիծաղելով դուռը  
կոտրում էր և թաղած կահն ու կարասին օրը ցերեկ  
դուքս էր տանում։

Եղիղեցիները, վանքերը, մատոնները, ոխտա-  
տեղիքը, Հոգետունները, վանօրէից Հրեշտակները,  
Յովուշի աշքեպիտուղոսի Հրամանաւ, դատարկուե-  
ցան, նոցա անբառ գործերը ընկան նորա և Տէր-Յա-  
կորի նման կարգաւորների տնօրէնութեան ներքոյ,

Գեռ ևս պատզամաւորները Պետերբուրգ մայրաքաղաքի մէջ քամի կուլ տալով ման էին դալիս և այս սկառէն այն պատն էին վաղում, որ Խրիմու Հայերը Յովսէփ տրքեսլիսկոպոսի մարդուհաճութեան, անձնահաճութեան և կամակորութեան և նորա Համախօհների աչքաբացութեան զոհ դառնալով, բաժնուեցան իրանց Հայրենական պերեզմաններէն, իրանց եկեղեցիներէն, իրանց սուրբօրէնքէն, իրանց բազմագարեան ժամանակնելով բնակուած տեղերէն, իրանց արդիւնաբեր կալուածներէն, և երկու ճանփով զուրս եկան իրխմէն, և այն ժամանակ միայն միաւորուեցան, երբ որ ընկան Օկուխրոի անազատի մէջ : Իրաւի այսուեղ նմանեցոն այն Խորայէլացոց աղպին որ Երուսաղէմէն զուրս եկած՝ Երեմիային-էլ Հետերը քաշարաշ առած, խարերաների միջնոր զութամբ, զնում էին Եղիպտոս : Խորուոնք ունեին լալու և սպալու Սոցու առաջնորդնելն-էլ էին այն խարերաները, որ որբոց, այրեաց, ժամերու, աղքատաց, անկելուոցների և այլ Հոգեւոր առաքինական տեղերի գանձերով լցրէլ էին իրանց ծոցն ու դրսոնք . . . . .

Այսեք Հազար տուն էին կամ տասնուհինդ Հազար Հոգի, երբ որ Տաւրիդաէն զուրս եկան, բայց Տաւրիդու ամեն Հոյ ընակիչքը չէին. շատերը չըլուեցին՝ ոչ Յովսէփ ալքեսլիսկոպոսի բարովներին և ոչ նորա դործակատարների ձայնին. մնացին Հանդարտնատած, խւրաքանչխր ընդ որթով և ընդ թղինեաւ խւրով և չըփոշմանեցան : Ոմանք-էլ զնացին Եկատերինուլալ, ոմանք-էլ կէս ճանալարհէն յիտ դարձան, ոմանք ևս յետոյ վերագարձան և չի զղջացան :

Եշուն էր, որ Տաւրիդաէն զուրս եկան, ծանր ու բարակ ճանալարհ բռնեցին. մօտ ճանալարհ չիմանալով՝ և սրտացաւ, ուղեցոյց չունենալով՝ եկան մինչեւ

Սամար. այնտեղ բռնեց ձմեռը. Անպատսպար, անհաց,  
անտէր. Օգոյ յոռութիւնը նրանց թիւը մինչի կէսը  
դադրեցուց. Այս տեղը դառաւ Տաւրիկեան Հայերի  
Համար Զարեհեան ձոր, ուր որ Խարայէլացիք երե-  
սուն ութը տարի անշարժ մնացին. Սորա-էլ երեսուն  
ութ ամիս կեցան և այն անմարդտրնակ, անշէն անա-  
պատը շէնցուցին, դարդարեցին իրանց գերեզմաննե-  
րով, որ մինչև այսօր անսուտ վկայ են, թէ ի՞նչ կա-  
րող է անել մեկ մարդ, երբ որ ոյլոց օդուար, հան-  
դիսոր, կեանքը իւր փառասիրութեան խաղալիկ անէ  
և նոցա դիակունքի վրայ կոխելով՝ կամենայ անցնել,  
որ իւր նպատակին համի....

Ընդ հուր և ընդ ջուր անցնելով՝ վերջապէս եկան  
այնտեղ, ուր որ Յովուէփ արքեպիսկոպոսը հասաւ  
իւր բաղձանքի նպատակին. Ողարկած սկատդամա-  
ւորներէն, որովհետեւ ոմանք մեռել էին, կենդանի  
մնացողները բերին Եկատերինա Կոյսերուհւոյ շնոր-  
հած ամենողորմ պարզեագիրը, և Յովուէփ արքեպիս-  
կոպոսը թէպէտ փառաւոր հիմնարկութիւն արաւ  
Նոր-Նոխիջեան քաղաքին և նորա հինդ՝ Զալթըր,  
Թօվսոի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա և Նիալիթա  
գիւղօրէից, բայց չըկարաց արգելու հասարակաց  
դժոհոհութեան յորձանք, որ եկեղեցտկան մեծադու-  
մար դանձերու պատրուակաւ՝ իրանց երկրէ երկիր  
տարագրութեան վրէմն էին պահանջում և չէին մո-  
ռանում իրանց Աւետեաց երկիրը և իրանց կորու-  
սեալ դրախտը:

Եւ արդարեւ այն օրէն սկսած մինչև այսօր, ահս/  
ութսունեցորս տարին, որ Տաւրիկեան երկիրը ան-  
շրացաւ, իւր լաւ և արդիւնարար բնակիչներէն որ-  
բացաւ, իւր հարատութենմէն և վայելչութենէն մեր-  
կացաւ. ի՞նչ օդուտ ունեցան և Նախիջեանցիք-էլ

Տաւրիդայէն այս երկիր գաղթական գալով : Մի՛թէ  
Տաւրիդայի մէջ մնացած Հայերը քաղցած մեռան,  
մի՛թէ նոցա մէջէն չը յառաջացան և այժմ չը կան ևս  
հարռւստ մարդիկ . մի՛թէ Նախիջևանցիք որ Խրիմ  
մնային, քան զայն պակաս կրկնէին : Առա այս կողմ  
գալը ո՞ւմ աւելի օգուտ բերեց . Հայերին, թէ նոցա  
դրացի ժողովրդեան : Ի՞նչ էր Թօսովը, որ այժմ ե-  
րեւլի վաճառանոց է : Նոր-Չերքէզ, Փիրման, Ախ-  
սայ ո՞չ ասկաքէն Նախիջևանցւոց առուտուրով տռա-  
ջացան : Մի՛թէ Նախիջևանցոց վաճառականութիւնը  
Թագանրօդի, Խարկօվակ, Բահմուտի և այլ քաղաքաց  
ծաղկելուն քիչ օդնեց :

Եթէ Նախիջևանցիք մնացած լինէին իրանց տեղը,  
իրանց արթուն առուտուրով, իրանց անձանձիք  
վաճառաշահութիւնով, իրանց արդար վաստակնե-  
րով, իրանց անտեսական խոհեմութիւնով, Թուսաց  
քաղցր հովանաւորանթեան տակ՝ ի՞նչ երջանկութեան  
պիտի հասնէին, ի՞նչ հողերի, կալուածների, այդի-  
ների, սկարտէղների, անտառների, գեղերի տէր ովհ-  
տի լինէին . մէջերէն ո՞ւքան միլիոն դարձուած անող  
մարդիկ պիտի առաջանային, — այս նորա այժմեան վի-  
ճակէն քաջ է յայտնվում :

Եթէ որ Նախիջևանցիք կողովուած, մերկա-  
ցած, տնանկացած եկան և չոր ու դատարկ գետնի  
վրայ հիմք դրին և այսպիսի գեղեցիկ, սրայծառ և  
բաղմաց նախանձելի քաղաք շինեցին, այսքան հարլո-  
տացան, այսքան եկեղեցեաց, վանքի, կալուածների,  
խանութների տէր եղան, իրանց վաճառականութիւնը  
տարածեցին Ստավրասօն, Զօնամօն, Վղլար, Աստ-  
րախան, Մոսկով, Պետերբուրգ, Թագանրօդ, Բահ-  
մուտ, Խարկօվա, Օդեսա, Կոստանտնոպոլիս և բոլոր  
Եւրոպայի հետ ցորենի, վուշի, երկաթի, եղի, ճարուի,

կաշիի, բուրդի, խճիի և այլ նիւթերի վաճառականութիւն սահմանեցին, ի՞նչ պիտի դառնային, եթէ մնացած լինէին իրանց տեղերը և այնքան ինասներ չքրաշած՝ իրանց տիին և տուրին պարապէին :

Օքերերը սկասմում էին թէ՝ քանի որ Խրիմումն էին՝ այն մարդը մարդ չէր, ով որ տարին մէկ անգամ կոստանտնոպոլիս, Խղմիր, Վենետիկ, Մարսել, մինչև Լօնդօն, Կիսսարօն ձանփորդութիւն չանէր. Բայց երբ որ Նախիջևան շինուեցաւ՝ նորա առաջին բնակիչների մշտէն ով որ հազար ոռորդի փողունէր, նորան մատով ցոյց կըտային. Եթէ Նախիջևանցիք այդ չնշին փողով այսքան յառաջացել են այնտեղ, ուր որ շրջապատած են օտար աղքերէ, ըստ մեծի մասին Թօնսկոյ Կազակներէ և Խախօններէ, որոնցմէ ոչինչ յառաջադիմութիւն սովորելու չին՝ որքան պիտի յառաջանային իրանց տեղումը, ուր որ նոյա ծառը արդէն արմատացել էր և սկսուզը վրայէն անսպակաս, և ուր որ Եւրոպացիք անսպակաս ելումուտ են անում և իրանց հետ բերում են իրանց լուսաւորութիւնն ու կենցաղակիրթութիւնը:

Վրիմու այժմեան Հայերէն ևս կըստուգուի, որ այնտեղ-էլ կար առոտուրի ձանապարհ, գոլով Եւրոպացի դուռն. և եթէ Նախիջևանցիք մնացած լինէին այնտեղումը անշարժ՝ այժմ բոլոր Տարբիկը կը լինէր Հայերի ձեռին, իւր ամեն արդիւնքով և արդիւնաբեր կալուածներով. Ի՞նչ վաճառաշահութիւն չէր կարող այնտեղ կազմակերպել Նախիջևանցին. չէր կարող երկրագործութիւնը \*ծաղկեցնել. չէր կարող խաշնաբուծութիւնը և անդէռողութիւնը զօրացնել. չէր կարող Սի-Շովը նաւերով ծածկել. և Նախիջևանայ մեջ գտնուած հարստութիւնը եթէ այնտեղ լինէր այժմ, միթէ իրաւացի չէր լինիլ նորա «Ռուսաստանի Խոալիա» կոչումնը. Յայտնի է, որ քիչ աղդը քիչ հարուստ մարդիկ կ'ունենայ. բայց բազմաթիւ ժողովուրդը շատ հարուստներ և շատ հարստութիւններ կ'ունենայ. Վրիմէն Հայերի դուրս գտնը միայն Հայերին չրվասսեց, բայց ժերակղզւոյն ինաս բերեց:

Արիմ կ քելիսէ թէ ժողովուրդ շատ ստանայ,  
բայց Նախիջևանցի Հայերի նման ժողովուրդ չի ու-  
նենալ: Եւ Նախիջևանցիք, թէ և ուկեզօծ պատերի  
մէջ նստեն, բայց բնաւ երբէք Տարիկը չեն մոռա-  
նալ: Տարիկայէն եկած ծերերը վախճանեցան, բայց  
նրանցուն մնացած խօսքերը, առանդութիւնները, ծե-  
սերը, յիշատակները և սովորութիւնները քելնէ քե-  
րան անցնելով որդւոց յորդիս որպէս ժառանգութիւն  
են պահպանմէ և Խրիմի սովորութիւն ասելով՝ իրանց  
նախնաւունդ Հայրենական թանգաղին աղղութիւնն են  
խմանում: Նոցա խօսակցութեան տկանջ զնողը, ինքն  
իրան ասում է՝ սորա-էլ իրանց Հայրերի կորցրած  
երկրի վրայ են լաց լինում. սորա-էլ Խրայէլացոց  
աղղի նման միշտ ասում են անմոռնէ ։ Թէ մոռա-  
ցայց գքեզ, Երաւաղէմ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի  
լեզու իմ՝ իքիմս իմ, թէ ոչ յիշեցից գքեզ՝ իսկիղըն  
ուրախութեան իմոց:

Արիմը ունի իրաւոնք հին Տիւրոսի նման Նախ-  
իջևանը՝ իւր զոսար—նոր կարթաղինէ անուանել և  
նորամէն կարեկցութիւն ոսկանել. Նախիջևանն-էլ  
ունի իրաւոնք նորա վրայ, որպէս զաւակակորոյս,  
անշքայեալ մօր՝ արտաստել և նորա վաղնջուց փա-  
ռաւորութիւնը, զեղեցկութիւնը, որդւովք և զստե-  
րոք ծաղկեալ ժամանակները միտքը բերելով՝ աշ-  
խարհի շրջանի անհաստատութեան վրայ դլուխը  
շարժելով, փրկարար մոռածութիւններ անել և երկ-  
դիմեան Յանոսի նման անցեալը խորհելով՝ ապագայի  
Համար լաւ, անյոզդողդ և մտաց դիտակցութեամբ  
նախապատրաստութիւն անել. Հասկանալով թէ՝  
Խրիմը ի՞նչ Հանգամանքների մէջ ինչե՞ր կրեց, ի՞նչ  
տեղէն ստացաւ իւր վերջին Հարուածը և անձնապահ  
լինելով՝ զգուշանալ: Նախիջևանցիք կարող են Հաս-  
տատ իրանց վրայ բերել այն մարգարեական խօսքը,  
որ ասուած է ։ Զեռք Զօրաբարելի Հիմն եղին տանս  
այսմիկ, դարձեալ ձեռք նորա կանգնեսցեն զսա՛:



## ՅԱՒՅՈՒ

1) սուր Ռ. Ա. Շահնշահան - Հայկական նոր և դիրքի մեջ յարթած,  
Հանգերձ բառապրոց և լայն լայն թիվան գաղտնաբերոց, — աշխատաբ-  
ռութիւն Պ.\*\*\*, դին է 30 կուկ արծաթ :

2) «Ախակասարք Երդարձ») Հանգերձ կանոնոց երաժ լատական իս-  
պերով, — աշխատասիրութիւն Գամառ - Ջամֆիլայի, դին է 1 մանեթ :

3) «Խորինց կոչ զարդ պատճեններու» Հանգերձ ութը պատկերով,  
և բառապրոց, — թառը մանութիւն Գամառ - Ջամֆիլայի, դին է 65 կուլ.

4) «Համբատիր և պատկերազարդ Սամկը Խառնվանի և Վահագ  
պէտական տպաց» — աշխատասիրութիւն Գամառ - Ջամֆիլայի, դին 23 կ.

5) «Պատճեններ Ունին Մանեթ պետարաք» — աշխատասիրութիւն Առ-  
փայելի Պատճեննեան, դին է 1 մանեթ 23 կուկել :

6) «Միջնամիջնը Հուրց ազգի պատճեններոց» — աշխատասիրու-  
թիւն Ա. Կ. Աբրուց, դին է 40 կուկել :

### Մանեթ առկ Է՞՞

1) «Հայոց ազգի պատճեններոց», դին է 1 առըլի 30 կուկել :

2) «Անգրածի նորմն ճանապարհարդարութիւնը», դին է 10 կուկել :

Սա դրաբը կարելի է առանալ պ. Խառնակ Տէր-Միքայէլանոյի  
և Ընկերութեան Գրադադաւանուց մը յանազայ Հայոցի —

### Եր Տիգանը

Եր Կույխու մագանտ Ա. Տեր-Միքալօս և Կուտ.